Քրիստոնյա Հայաստան

2025, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (682)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Պայծառակերպության տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Հուլիսի 27-ին՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի առիթով, Միածնաէջ Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին հայաստանյան և սփյուռքյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ և միաբաններ, բարերարներ, Կաթողիկոսական դամբարանի և մոմավառության աղոթասրահի բացման առիթով Հայաստանից ու սփյուռքից ժամանած հյուրեր և ուխտավորներ:

Սուրբ Պատարագի ընթացքում տոնի խորհրդի վերաբերյալ քարոզեց պատարագիչ Արշակ արքեպիսկոպոսը:

«Պայծառակերպությամբ Հիսուս գոտեպնդում է առաքյալներին, ցույց տալիս աստվածային իր ամենազորությունն ու կարողությունը: ....Մենք համախմբվել ենք նվիրական այս սրբավայրում՝ մեկ անգամ ևս վերապրելու Հիսուսի Պայծառակերպության, Նրա սրբազան աղոթքի նվիրական պահը: Հավաքվել ենք աղոթքով մենք ևս պայծառակերպվելու»,– նշեց պատարագիչ Սրբազանը՝ ընդգծելով, որ աղոթքով ձգտում ենք փոխակերպվել, խոստանում ենք հեռանալ ու մերժել անցյալի մեղքերն ու սխալները, Աստծուց զորություն ստանալ ապագայի հոգևոր մարտերում հաղթելու համար:

«Պայծառակերպված Հիսուս շարունակում է մեզ դուրս բերել մեղքի և ապականության տիղմից, և Նրա լուսավոր զգեստների քղանցքներին կպած՝ մենք շարունակում ենք ձգտել սրբության, փրկության և անապականության:

Ամպամած ու մռայլ է այսօր մեր կյանքը՝ լի մտահոգություններով ու մարտահրավերներով, ծանր մարտահրավերներով, որոնք մթագնում են կարծեք ապագայի լույսը: Մշուշված են հորիզոնները հայոց կյանքի: Մթնոլորտը շիկացած է թշնամանքով, ատելությամբ և հակառակություններով: Շփոթմունքի և խուճապի մեջ, վախերի ու տագնապների ազդեցության տակ գետնամած ու կծկված ենք մենք, ինչպես առաքյալները: Բայց մեր հուզումն ու երկյուղը Հիսուսի պայծառակերպված դեմքից չեն, այլ մեր պայծառակերպվելու կամքի տկարությունից: Աղոթքը նվազել է մեր կյանքում, խոսքն ու վազքը՝ շատացել: Մենք խոսքից առավել պետք ունենք լռության, վազքից առավել՝ խոկումի և խորհրդածության: Խղճի ազատություն փնտրելուց առաջ պետք ունենք խղճի, մտքի ազատություն փնտրելուց առաջ պետք ունենք մտքի: Թե չունես խիղճ և չունես միտք, ազատությունը կդառնա բեռ ու փորձություն:

Խոսելուց և գործելուց առաջ պետք է աղոթել: Լավ է լռել և անշարժանալ, քան թե խոսել և գործել առանց աղոթքի, առանց խորհելու: Պայծառակերպությունն աղոթքի արդյունքն է՝ բարի խոսքի և բարի գործի երաշխիքը: Պետք է լռեն ձայները՝ աղոթքով չսնուցվող լեզուների, պետք է դադարեն քայլերը՝ աղոթքով չընթացող ոտքերի: Աղոթքով պայծառակերպվենք, ապա և խոսենք ու գործենք: Հիսուսի պայծառակերպված դեմքը, արեգակի նման բոցավառվող աչքերը մեր առջև բացում են մի հրաշալի ճանապարհ՝ հանրային հաշտության և համազգային համերաշխության ճանապարհ, փրկության և ազատագրության ճանապարհ»,– ասաց Արշակ Արքեպիսկոպոսը:

Իր խոսքում պատարագիչ Սրբազանը հորդորեց ներկաներին Տիրոջ Պայծառակերպության խորհրդով մաքրել մտքերն ու խորհուրդները, ցրել հորիզոնի մշուշը, հեռացնել կյանքի ճանապարհը փակող գերեզմանի քարը, բացել հարության դռները, որպեսզի վեր հառնի մեր կյանքում հաղթանակի ու վերածննդյան ոգին:

«Թող արևները լուսավորեն համազգային մեր կյանքի մթին խորշերը, թող պատերազմի կորուստներից ու ցավերից բեկված մեր ժողովուրդն ամրանա հույսով ու հավատքով, թող արժանապատվությունն ու պատվախնդրությունը ոռոգեն մեր հաղթական ճանապարհը, և թող Տիրոջ արդար ձեռքը ծանրանա նրանց վրա, ովքեր մարտնչում են Աստուծո և Իր Սուրբ Եկեղեցու դեմ, թող ծանրանա նրանց վրա, ովքեր հարվածում են հիմերին հայոց պետության և փորձում ոչնչացնել հայոց ինքնությունը: Թող նրանց դաժան վախճանը դառնա նախազգուշացում սերունդներին, որպեսզի ոչ ոք այլևս չհանդգնի խավարի գործերով կործանել այն, ինչ Աստված Ինքն է օրհնել»,– նշեց Սրբազան Հայրը՝ մաղթելով, որ պայծառակերպված Հիսուսի լույսով խաղաղ մնա Հայոց աշխարհը, անհաղթահարելի՝ Հայոց պետությունը, և անսասան՝ Հայոց Եկեղեցին՝ Սուրբ Էջմիածնի հայրապետական աստվածահաստատ իր Աթոռով, համերաշխ ու արժանապատիվ՝ մեր ողջ ժողովուրդն ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Կաթողիկոսական դամբարանի և մոմավառության աղոթասրահի բացման արարողությունը

Հուլիսի 27-ին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մայր Տաճարի շրջաբակում կառուցված Կաթողիկոսական դամբարանի և մոմավառության աղոթասրահի բացման արարողությունը:

Կաթողիկոսական դամբարանը և մոմավառության աղոթասրահը կառուցվել են ազգային բարերար հոգելույս Գառնիկ Յակուբյանի և տիկին Անահիտ Չաթալպաշյան-Յակուբյանի հովանավորությամբ: Ճարտարապետներն են Ասլան Մխիթարյանը և Հայկ Մկրտչյանը, իսկ շինարարությունն իրականացրել է «Հորիզոն 95» ՍՊԸ:

Արարողությանը ներկա էին հայաստանյան և սփյուռքյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ և միաբաններ, բարերար տիկին Անահիտ Չաթալպաշյան-Յակուբյանը և Յակուբյան ընտանիքի անդամներ ու հարազատներ, այս առիթով սփյուռքից ու Հայաստանից ժամանած ուխտավոր հայորդիներ:

➥ էջ 2

Տեղի ունեցավ Կաթողիկոսական դամբարանի և մոմավառության աղոթասրահի բացման արարողությունը

➥ էջ 1

Արարողությունն սկսվեց Հայրապետական հանդիսավոր թափորով: Վեհափառ Հայրապետի ընթերականերն էին Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբգար եպիսկոպոս Հովակիմյանը և Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Հընթացս արարողության՝ շարականների ու սաղմոսերգության ներքո, ջրով և գինով լվացվեցին աղոթասրահի երկու մատուռների Սուրբ Սեղանները: Այնուհետև աղոթքների ընթերցումից հետո Սրբալույս Մյուռոնով Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց դրանք՝ անվանակոչելով մատուռները հայոց առաջին լուսավորիչներ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների անուններով: Այս առիթով մատուռներում զետեղվեցին նաև առաքյալների մասունքներ:

Բացման արարողության ավարտին կատարվեց հոգեհանգստյան կարգ ազգային բարերար լուսահոգի Գառնիկ Յակուբյանի, Յակուբյան և Չաթալպաշյան գերդաստանաց ննջեցյալների հոգու խաղաղության համար:

Բացման արարողության առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր հայրական պատգամը փոխանցեց ներկաներին՝ գոհություն մատուցելով առ Բարձրյալն Աստված, որ հայոց հոգևոր կենտրոնում՝ Սուրբ Էջմիածնում, մեր ժողովրդի հոգևոր մխիթարության, հավատքի զորացման նվիրական մի նոր սրբատեղի հառնեց:



«Հայրապետների շիրիմների ամփոփման համար պանթեոն կառուցելու այսպիսի նախաձեռնություն ծրագրվել էր տակավին 1955 թ.՝ Վազգեն Ա երջանկահիշտակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրոք: Մեզ համար մեծ ուրախություն եղավ, որ նախապես տեղյակ չլինելով այս նախաձեռնությանը՝ Մենք նույնպես մտահղացումն ունեցանք Կաթողիկոսական դամբարան հաստատելու Սուրբ Էջմիածնում, որն այսօր արդեն հոյաշեն կերպով իրագործված՝ հավատավոր մեր ժողովրդի համար ծառայելու է նաև որպես մոմավառության աղոթասրահ: Փառք ենք տալիս Ամենակալ Աստծուն, որ մեծանուն բարերար տիար Գառնիկ Յակուբյանի և իր ազնիվ կողակցի՝ տիկին Անահիտի հովանավորությամբ կյանքի կոչվեց այս ձեռնարկումը:

Կաթողիկոսական դամբարանը, սիրելիներ, ամփոփավայրն է լինելու մեր Սուրբ Եկեղեցու ննջեցյալ Հովվապետների, որոնց կյանքը եղել է ամբողջանվիրում Աստծուն, ազգին ու հայրենիքին: Դամբարանը գալիք սերունդներին յուրովի հիշեցնելու է Ամենայն Հայոց Կաթողիկոսների հոգեխնամ առաքելության մասին, որով բարեզարդվել ու ծաղկել է համայն մեր ժողովրդի ազգային և եկեղեցական անդաստանը: Մեր Սուրբ Եկեղեցու երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոսների ծառայությունը լի է եղել զոհողությամբ, Քրիստոսապատգամ սիրո, արդարության և ճշմարտության քարոզչությամբ, բայց նաև հայրական հորդորով ու քաջալերությամբ՝ ապրելու և արարելու առ Աստված հավատով հանուն ազգի ու հայրենյաց»,— ասաց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ երանաշնորհ Հայրապետներն իրենց ողջ գործունեության ընթացքում եղել են հավատքի քաջ վկաներ, հույսի լուսատուներ մութ ու խավար ժամանակների մեջ, արիության ու հաստատակամության օրինակ հայ ժողովրդի համար՝ ծառացած դժվարություններն ու նեղությունները հաղթահարելու և նորանոր հաջողություններ արձանագրելու:

Դիմելով ներկաներին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ մեր օրերում, երբ տարբեր կեղծ գաղափարախոսություններով խաթարվում է մեր արժեհամակարգը, եղծվում ու նենգափոխվում են հոգևոր ընկալումները, այսպիսի եկեղեցական շինությունները, սրբավայրերն ու ուխտատեղիները իրենց կրոնական և ծիսական կարևոր նշանակությամբ հավատքի զորացման, հոգու փրկության և աստվածահաճո կյանքի ամրապնդման օրինաբեր օջախներ են: «Այս կառույցը, արդարև, սոսկ քարեղեն շինվածք չէ, այն աղոթքի տուն է, հավատացյալների ապավինության վայր՝ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների մատուռներով, որտեղ պաշտամունքային արարողություններ են մատուցվելու, և հավատացյալներն իրենց սրտառուչ հայցն ու աղոթքն են վերառաքելու Տիրոջը: Այսպիսի օրինյալ վայրում հավատացյալի հետ հանդիպում են ժամանակն ու հավերժությունը, երկնավորն ու երկրավորը, քանզի հոգուց բխած աղոթքները երկինք են հասնում և աստվածային օրհնությունն են հեղում Փրկչին հուսացողների սրտերին»,— նշեց Հայոց Հովվապետը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Կաթողիկոսական դամբարանի և մոմավառության աղոթասրահի կառուցումը ազգի զավակների անշիջանելի հավատքի, բարեգործության ազնիվ ոգու, արժանավորին արժանին մատուցելու երկնահաճո արտահայտություն է: Այս կապակցությամբ, երախտագետ զգացումներով հիշելով մեծանուն բարերար հոգելույս Գառնիկ Յակուբյանին և Յակուբյան ընտանիքի բացառիկ աստվածսիրությունն ու ազգանվիրումը, ի գնահատություն այս գովարժան իրագործման՝ Նորին Սրբությունը մեծազնիվ տիկին Անահիտ Չաթալպաշյան-Յակուբյանին շնորհեց «Սուրբ Էջմիածին» բարձրագույն շքանշան, իսկ որդուն՝ Արամ Յակուբյանին՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան:

Վերջում Հայոց Հայրապետը մաղթեց, որ տերունաշնորհ հավատքի լույսը մշտավառ լինի հայ ժողովրդի հոգում, և այս սրահից ևս հանապազ հնչի հայցն առ Աստված հայրենյաց խաղաղության, ազգի բարօրության, Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

Արարողության մասնակիցները Մայր Տաճարում ներկա գտնվեցին Պայծառակերպության տոնի առիթով մատուցված Սուրբ և Անմահ Պատարագին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հուլիսի 16-ին **ԱՄՆ հայոց արևելյան թեմի ուխտավորներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան թեմի «Հայաստան ծառայության» ծրագրի երիտասարդ մասնակիցներին՝ առաջնորդությամբ Ֆիլադելֆիայի Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Հակոբ քահանա Գևորգյանի:

Տեր Հակոբը Հայոց Հովվապետին տեղեկացրեց, որ ծրագրի շրջանակներում երիտասարդ հայորդիները Հայաստանում մասնակցել են համայնքային կամավորական ծրագրերի, ինչպես նաև այցելել Հայաստանի տարբեր սրբավայրեր՝ զորացնելով իրենց հայրենաճանաչությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունը բաշխելով երիտասարդներին, գնահատեց նրանց մասնակցությունը կամավորական ծրագրերին: Վեհափառ Հայրապետը նաև գոհունակություն հայտնեց, որ ուխտավոր երիտասարդները ամուր են պահում իրենց կապը Եկեղեցու հետ՝ գիտակցությամբ, որ հավատարիմ մնալով ազգային արժեքներին՝ կարող են անխաթար պահպանել իրենց ինքնությունը:

Իր խոսքում Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ երիտասարդները հոգևոր նոր լիցքերով և ներշնչանքներով կվերադառնան իրենց համայնքներ և իրենց ազգանվեր ծառայությամբ օգտակարություն կբերեն հայրենիքին և Մայր Եկեղեցուն:

Հուլիսի 17-ին **«ՀԲԸՄ Ֆոկուս» ծրագրերի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «ՀԲԸՄ Ֆոկուս» ծրագրի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ Կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յակուբյանի:

Հանդիպմանը տիար Յակուբյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ ՀԲԸՄ երիտասարդական նախագծերի շրջանակներում իրականացվող «ՀԲԸՄ Ֆոկուս» ծրագիրն այս տարի առաջին անգամ է անցկացվում Հայաստանում և համախմբել է շուրջ 4000 երիտասարդ հայ արհեստավարժների աշխարհի տարբեր կողմերից՝ նպատակ ունենալով ստեղծել համախոհների ցանց, ընդլայնել անձնական ու մասնագիտական կապերը և ընդգրկել ՀԲԸՄ համաշխարհային գործունեության մեջ: Տիար Յակուբյանը նաև իր երախտագիտությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ ծրագրի մասնակիցներին հյուրընկալելու և աշխատաժողովը Մայր Աթոռում իրականացնելու հնարավորության համար, ինչն էլ ավելի կամրապնդի երիտասարդների կապը Հայոց Եկեղեցու հետ և կնպաստի ազգային ինքնության վերարժևորմանն ու զորացմանը:

Այնուհետև ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարձրորեն գնահատելով ՀԲԸՄ կողմից իրականացվող նմանօրինակ ծրագրերը, որոնց շնորհիվ տարբեր երկրներում բնակվող հայորդիները հնարավորություն են ստանում մեկտեղվելու հայրենիքում, շփվելու միմյանց հետ և համատեղ ծրագրեր մշակելու՝ ի նպաստ ՀԲԸՄ առաքելության արդյունավորման և ի պայծառություն հայրենիքի:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ նաև Մայր Աթոռի և ՀԲԸՄ միջև ձևավորված սերտ կապերին ու փոխգործակցությանը՝ կարևորելով միության անուրանալի ներդրումը Հայ Եկեղեցու առաքելության արդյունավորման գործում: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ հայրենիքից ստացած տպավորությունները նոր ոգեշնչման աղբյուր կդառնան երիտասարդների համար՝ առավել նախանձախնդիր լինելու ազգային արժեքներին ու սրբություններին և իրենց ներդրումը բերելու հայ կյանքին:

Վերջում Հայոց Հայրապետը հորդորեց հայորդիներին ազգային-եկեղեցական կյանքում և հայրենիքին օգտակարություն բերելու գործում ներշնչվել ՀԲԸՄ երախտարժան նախագահների ու կենտրոնական վարչության անդամների գովելի օրինակով, իրենց գիտելիքներն ու փորձառությունը ծառայեցնել ազգային կյանքի պայծառությանը:

Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաև ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին երիտասարդների ներգրավվածությանը եկեղեցական կյանքում, հոգևորականների պատրաստությանն ու ծառայությանը, հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներին: ➥ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

↩ էջ 2



Հուլիսի 20-ին **ՀՅԴ երիտասարդական և ուսանողական 12-րդ Համահայկական բանակումի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ հեղափոխական դաշնակցության երիտասարդական և ուսանողական 12-րդ Համահայկական բանակումի մասնակիցներին՝ ուղեկցությամբ ՀՅԴ Բյուրոյի անդամ Հովսեփ Տեր-Գևորգյանի և ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ Գեղամ Մանուկյանի:

Հանդիպմանը տիար Հովսեփ Տեր-Գևորգյանը, հայցելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը, ընդգծեց, որ այս տարվա ՀՅԴ Համահայկական բանակումն իրականացվում է «Պիտի վերադառնանք» կարգախոսով, ինչը կարևոր ուղերձ է՝ վերադառնալու մեր արմատներին ու մեր հոգևոր-ազգային արժեքներին:

Այնուհետև Նորին Սրբությունն իր հայրական օրհնությունը բերեց ներկաներին՝ գնահատանք հայտնելով ՀՅԴ երիտասարդական և ուսանողական միությունների պատասխանատուներին՝ տարբեր երկրներից հայորդիների հայրենիքում պարբերաբար համախմբելու համար, ինչը լավագույն առիթ է զորացնելու նրանց ազգային-հոգևոր նկարագիրը և նվիրումն առ հայրենին:

Վեհափառ Հայրապետը, խոսելով ազգային ինքնությունն անխաթար պահելու և հոգևոր արժեքներով առաջնորդվելու հրամայականի մասին, ընդգծեց, որ հայրենիքի նկատմամբ անսակարկ սիրով ու ազգային նկարագրով երիտասարդն է հայրենիքի ամրությունը և ազգի հարատևությունը:

Անդրադառնալով Արցախի բռնազավթման, հայրենազրկված արցախահայության իրավունքների պաշտպանության և Ադրբեջանում մինչ օրս պահվող հայ գերիների վերադարձման, Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին ու երկրում տիրող դժվարին կացությանը՝ Հայոց Հայրապետը կարևորեց ազգային միաբանությունը՝ ի սեր հայրենիքի և հանուն համազգային շահերի ու առկա մարտահրավերների հաղթահարման:

Վերջում Նորին Սրբությունը մաղթեց, որ ազգասիրության զորեղ ոգին ու կամքը մշտապես ուղեկից լինեն հայ երիտասարդներին՝ համընդհանուր ճիգերով զորացյալ կերտելու հայրենքի անվտանգությունը, մեր ժողովրդի խաղաղ ու բարօր կյանքը:

Հուլիսի 24-ին **ՀՀ-ում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Լիբանանի դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Մայա Դաղերին:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց դեսպանին Հայաստանում իրականացրած առաքելության համար: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջև առկա ջերմ հարաբերություններին, նաև խոսեց երկրների առջև ծառացած մարտահրավերների մասին՝ վստահություն հայտնելով, որ դրանք կհաղթահարվեն ժողովուրդների զորեղ հավատքի ու լավատեսական ոգու շնորհիվ:

Զրույցի ընթացքում տիկին Մայա Դաղերն արձանագրեց, որ երկու երկրների բարեկամությունը պիտի շարունակի նորանոր արդյունքներ գրանցել և առավել ամրապնդվել:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեսպանին հաջողություններ մաղթեց հետագա ծառայության մեջ:

Հուլիսի 25-ին **ԱՄՆ հայոց արևելյան թեմի ուխտավորների**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան թեմի Նյու Յորքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համայնքի ուխտավորներին՝ ուղեկցությամբ հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Մեսրոպ քահանա Հովսեփյանի:

Նորին Սրբությունն իր օրհնությունը փոխանցեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համայնքի անդամներին՝ կարևորելով նրանց այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ իբրև սիրո և հավատարմության դրսևորում Սուրբ Էջմիածնի նկատմամբ:

Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ ուխտագնացությունը Հայաստան ներշանչանքի աղբյուր պիտի դառնա հայորդիների համար՝ դժվարին այս ժամանակներում առավել զորանալու իրենց հայրենանվիրումի և եկեղեցասիրության մեջ:

Ամենայն Հայոց Հայրապետը պատգամեց ուխտավորներին ամենայն ջանք ի գործ դնել իրենց համայնքի պայծառության, զավակների հայեցի դաստիարակության, ազգային ինքնության պահպանության և հայրենիքի շենացման համար:



ՀԲԸՄ-ի սկաուտական բանակումի մասնակիցներն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հուլիսի 24-ին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը Մայր Աթոռում ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)՝ Սիրիայի, Արգենտինայի և Երևանի «Անդրանիկ սկաուտական բանակումի» շուրջ 90 մասնակիցներին:

Սրբազան Հայրը, պատանի և երիտասարդ հայորդիներին փոխանցելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները, կարևորեց սկաուտական բանակումի մասնակիցների այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչը լավագույն առիթ է զորացնելու նրանց ազգային-հոգևոր նկարագիրը և սերը հայրենիքի նկատմամբ:

Նաթան արքեպիսկոպոսը պատգամեց հայորդիներին նախանձախնդրորեն պահել և պահպանել իրենց ազգային ինքնությունն ու արժեքները, ամրապնդել կապը Հայոց Եկեղեցու հետ և ջանքեր գործադրել օգտակարություն բերելու հայրենիքի պայծառությանն ու առաջընթացին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց Հ. Մ. Ը. Մ. համահայկական 12-րդ մարզախաղերի մասնակիցներին

Հուլիսի 29-ին ուխտավորաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեցին Հայ մարմնակրթական ընդհանուր միության (Հ. Մ. Ը. Մ.) 12-րդ մարզախաղերի շուրջ 850 սկաուտներ՝ ուղեկցությամբ Կենտրոնական վարչության անդամների:

Այս առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միածնաէջ Մայր Տաճարում կատարվեց մարզախաղերի մասնակիցների օրհնության կարգ:

Արարողության ավարտին Նորին Սրբությունն իր հայրական պատգամն ու բարեմաղթանքները բերեց հայորդիներին՝ գոհունակություն հայտնելով, որ ավանդական դարձած մարզախաղերի առիթով աշխարհի տարբեր կողմերից համախմբվել են հայրենիքում՝ մրցապայքարում դրսևորելու իրենց հմտություններն ու կարողությունները, միաժամանակ ճանաչելու և բարեկամանալու միմյանց հետ:

«Խիստ կարևոր է երիտասարդներիդ մասնակցությունը նման վարժանքներին ու մրցույթներին, որոնք միջոց են՝ զորանալու մարմնով և հետևողական աշխատանքով, տոկունությամբ ու ոգու ամրությամբ արձանագրելու ապագա հաղթանակներ: Վարժանքներն ու մրցույթները միջոց են նաև զորանալու հոգով՝ Աստծուն ապավինած դիմակայելու բոլոր փորձություններին ու դժվարություններին և աննկուն ընթանալու դեպի հաղթություն: Ուստի, պարբերաբար կազմակերպվող նման միջոցառումներն իրենց նշանակությամբ և առաքելությամբ ավելին են, քան սոսկ մարզական մրցույթներ»,— նշեց Հայոց Հայրապետը:

Անդրադառնալով հայ ժողովրդի և հայրենիքի առջև ծառացած բազմաթիվ դժվարություններին ու խնդիրներին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ արցախյան պատերազմի հետևանքով հայրենի երկիրը տակավին դիմագրավում է լրջագույն անվտանգային մարտահրավերների, կարիքի մեջ է տեղահանված արցախահայությունը, ներհասարակական կյանքում խորանում են անհամերաշխությունն ու անհանդուրժողությունը, գերակշռող են և խորապես անհանգստացնող ապագայի անորոշության զգացումները:

«Հավատում ենք, որ արդարությունը պիտի հաղթանակի, և համախումբ ջանքերով պիտի թույլ չտանք, որ մեր կյանքում գերակայեն եղբայրատյացությունը, կեղծիքն ու չարագործությունները, և խաթարվի ազգային միասնականությունը: Հայրենիքի համար այս բարդագույն իրավիճակում անգամ պետք չէ հուսահատվել և հիասթափություն ապրել: Դուք, որ ծնվել ու հասակ եք առել աշխարհի տարբեր երկրներում, ինչպես և Հայաստանում ու Արցախում, պատասխանատվություն ունեք մեր ժողովրդի լուսեղեն գալիքի կերտման գործում՝ ձեր ուժերն ու կարողությունները ծառայեցնելու ի սեր ազգի ու հայրենիքի: Նաև դուք առաքելություն ունեք ազգային միաբանությունն ամրապնդելու, Հայաստան-Սփյուռք կապերն անսասան պահպանելու և նորովի արդյունավորելու: Այս հանձնառության բարեհաջող իրագործման համար առանձնակի կարևոր են ձեր հայրենաճանաչությունը, ազգային ինքնագիտակցությունը, հայոց պետականության ամրապնդման կամքն ու վճռականությունը և դարերով նվիրագործված մեր արժեհամակարգի անխաթար պահպանումը: Դուք ապագան եք մեր հայրենիքի ու ազգի և երաշխիքը հայոց հարատևության, համընդհանուր մեր իղձերի ու երազանքների իրականացման:

➥ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց Հ. Մ. Ը. Մ. համահայկական 12-րդ մարզախաղերի մասնակիցներին

➥ էջ 3

Ձեր այցը հայրենիք կարևոր քաջալերանք է հայրենաբնակ մեր ժողովրդի, ձեզ հասակակից ձեր քույրերի ու եղբայրների համար»,– ասաց Հայոց Հովվապետը՝ հորդորելով երիտասարդ սկաուտներին իրենց հոգում մշտավառ պահել հայրենյաց սերը, ուժ առնել հարազատ հողից և բազմադարյա սրբություններից ու ներշնչվել մեր հայրերի հավատաշեն գործերից, հավատարիմ մնալ ազգային-հոգևոր արժեքներին, զորացնել իրենց սրտերում որդիական նվիրումն առ հայրենին, Սուրբ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Իր խոսքում Նորին Սրբությունը պատգամեց ուխտավորներին նաև անխախտ պահել իրենց ազգային ինքնությունը, հպարտանալ Հայոց պատմությամբ, նախնյաց կերտած ժառանգությամբ և հանուն արդարության, հանուն անկախ կյանքի հայ ժողովրդի մղած անդուլ պայքարի հզոր ոգով:

«Միշտ արիասիրտ կանգնեք ի պաշտպանություն մեր ժողովրդի իրավունքների և նրա արդար դատի: Հայաստանում ձեր մեկտեղումի այս նշանակալի և անմոռանալի օրերը թող դառնան առիթ ոգեշնչումի ու հանձնառության՝ ձեր գիտելիքներով ու շնորհներով բոլորանվեր օգտակար ծառայություն բերելու ազգային կյանքում և նորանոր հաջողություններ արձանագրելու՝ ի շահ մեր ժողովրդի և հայրենիքի»,– հորդորեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքը բերելով մարզախաղերի կազմակերպիչներին և բոլոր պատասխանատուներին իրենց նվիրյալ և ազգօգուտ ծառայության համար:

Վերջում Նորին Սրբությունը հայցեց Երկնավոր Տիրոջը, որ հայորդիներն ապրեն առողջ ու երջանիկ, լինեն արժանավոր զավակները մեր հայրերի և իրագործեն նրանց նվիրական տեսիլքներն ու երազանքները:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Եկեղեցու անկախությունը պետական իշխանության հակազդեցության պայմաններում

Վերջին ամիսներին լարված իրավիճակ է ստեղծվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևորականության միջև: Թիրախում Հայոց Եկեղեցին է... Մենք չէ, որ պետք է կարծիք հայտնենք եկեղեցական կանոնների վերաբերյալ: Քրիստոս է հիմնադրել Եկեղեցին, ու միայն կանոնական իրավունքով օժտված եկեղեցական համապատասխան ժողովական մարմիններն իրավունք ունեն խոսելու Եկեղեցու և եկեղեցական կարգերի մասին: Սակայն որոշակի անհրաժեշտությունից ելնելով՝ որպես գիտաշխատողներ և աստվածաբաններ՝ փորձենք համառոտ լուսաբանել ներկայումս արծարծվող խնդիրները:

1. Ինչ կարգով է կաթողիկոս ընտրվում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գերագույն հոգևոր առաջնորդն է, և նրա ընտրությունը համարվում է պատմական կարևոր իրողություն հայ ժողովրդի կյանքում: Նշենք, որ այս դեպքում կատարվում է երկու կարևոր արարողություն՝ ընտրություն Ազգային-եկեղեցական ժողովի կողմից և օծման, ձեռնադրման ու գահակալության ծիսակարգ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընտրում է Ազգային-եկեղեցական ժողովը, որը Հայ Եկեղեցու Գերագույն օրենսդիր մարմինն է: Ազգային-եկեղեցական ժողովի անդամներ են՝ Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամները (հոգևորականներ և աշխարհականներ, հայաստանաբնակ և սփյուռքի հայեր), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսն իր եպիսկոպոսներով, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներն ու պատրիարքությունների և միաբանությունների ներկայացուցիչները, Հայ Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները, բոլոր թեմական առաջնորդները, յուրաքանչյուր թեմից մեկ կամ ավելի անդամներ: Ազգային-եկեղեցական ժողովը ներկայացնում է ողջ հայ ժողովրդի խոսքն ու կամքը:

Կաթողիկոսական ընտրությունից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Սուրբ Խորանի վրա, կատարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և ձեռնադրության ծիսակարգը՝ որպես կանոն՝ տասներկու եպիսկոպոսների ձեռամբ (եթե չի ապահովվում եպիսկոպոսների 12 թիվը, ապա հնավանդ սովորության համաձայն՝ հնարավոր է ծիսակարգը կատարել նաև երեք եպիսկոպոսներով):

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայ ժողովրդի հոգևոր հայրն է և իրավունք ունի և՛ բարոյական, և՛ քաղաքական, և՛ կրթական, և՛ գիտամշակութային ոլորտներում հորդորելու, խորհուրդ տալու, խրատելու իր ժողովրդին: Կաթողիկոսն է նշանակում (որոշ թեմերում ընտրում են, իսկ Վեհափառը հաստատում է) և ազատում թեմական առաջնորդներին, և նրա առանձնաշնորհն են հետևյալ ծիսական արարողությունները՝ Սուրբ Մյուռոնի օրհնություն, եպիսկոպոսական ձեռնադրություն, թագավորի օծում (այժմ չի կիրառվում): Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարչական կառուցվածքի մեջ այժմ ընդգրկված են հետևյալ հիմնական միավորները՝ Ընդհանրական կաթողիկոսություն Ամենայն Հայոց (Սուրբ Էջմիածին), Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո (Անթիլիաս, Լիբանան), Երուսաղեմի Հայոց պատրիարքություն, Կ. Պոլսի Հայոց պատրիարքություն:

2. Արդյոք աշխարհիկ կառավարությունն իրավո՞ւնք ունի կաթողիկոսի գահընկեց անելու:

Պատասխանենք՝ չանձնավորելով և չքաղաքականացնելով հարցը. Հայաստանի Հանրապետության կառավարությունը, անկախ նրանից, թե ով է ղեկավարը, որևէ իրավասություն չունի չեղյալ համարելու կաթողիկոսական ընտրությունն ու օծումը:

Առաջին՝ կաթողիկոսի օծման եկեղեցական ծիսակարգը որևէ աշխարհիկ իշխանություն իրավունք չունի չեղարկելու, քանզի օծել են եպիսկոպոսները, իսկ Տերն ասում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Մատթ. ԺԸ 18): Ուստի՝ այն, ինչ կապել են եպիսկոպոսները, չեն կարող արձակել աշխարհիկ ղեկավարները:

Երկրորդ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայ ժողովրդի հոգևոր առաջնորդն է, ուստի ո՛չ ՀՀ կառավարությունը, ո՛չ ՀՀ բնակչությունը և ո՛չ էլ Սփյուռքը իրավունք չունեն պահանջելու կաթողիկոսի հրաժարականը. այդ իրավունքը բացառապես պատկանում է Ազգային-եկեղեցական ժողովին:

Երրորդ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաժարականը կարող են պահանջել միայն բացառիկ դեպքերում, օրինակ՝ եթե կաթողիկոսն ուրացել կամ փոխել է Հայ Եկեղեցու դավանանքը՝ հակվելով դեպի քաղկեդոնականություն: Խնդիրը բարձրացնում է եպիսկոպոսաց դասը, և որոշումը կայացնում է Ազգային-եկեղեցական ժողովը:

3. Ինչ գիրք է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն:

Մինչ «Կանոնագիրք Հայոց»-ը մի քանի բառով ներկայացնելը մեջբերենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքը՝ «Շաբաթ օրը մարդո՛ւ համար է, եւ ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար» (Մարկ. Բ 27): Տերունական խոսքի հիման վրա Հայ Եկեղեցու վարդապետները, նաև Դատաստանագրքի հեղինակ Մխիթար Գոշը, ասել են. «Օրենքներն են մարդու համար, ոչ թե մարդը՝ օրենքների»: Այսպիսով՝ մարդը չէ «Կանոնագիրք Հայոց»-ի ծառան, այլ այս ժողովածուն է ստեղծվել մարդուն օգնելու, խրատելու, սխալ վարքից զերծ պահելու և դեպի ճիշտ ճանապարհ ուղղորդելու համար: Քրիստոնեության նպատակը, առհասարակ, Եկեղեցու սահմանած և ընդունած կանոններն ի նպաստ մարդուն գործածելն է, նրան մեղքերից ազատելը, մաքրագործելն ու սրբացնելը և Աստծու արքայության ժառանգորդ դարձնելը:

«Կանոնագիրք Հայոց»-ը երկար դարեր եղել է հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու հիմնական իրավական ժողովածուն: Այն բովանդակում է և՛ եկեղեցական, և՛ աշխարհիկ կյանքը կարգավորող կանոններ, որոնք հեղինակել կամ սահմանել են Ընդհանրական Եկեղեցու հայրերը, Հայոց կաթողիկոսներն ու նշանավոր եկեղեցական գործիչները, ընդհանրական և տեղական ժողովները (որոնց մասնակցել են ոչ միայն հոգևորականներ, այլև ժամանակի իշխաններն ու նախարարները): Ժողովածուն բաղկացած է և՛ թարգմանական, և՛ զուտ հայկական կանոնական բնագրերից:

4. Ինչ սահմանումներ կան «Կանոնագիրք Հայոց»-ում կաթողիկոսի և եպիսկոպոսների կուսակրոն լինելու և կուսակրոնության ուխտը խախտելու վերաբերյալ:

Նախ նշենք, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում չկա այնպիսի կանոն, որի համաձայն՝ եպիսկոպոսները և կաթողիկոսը պետք է անպայման լինեն կուսակրոն: Երկրորդ՝ երբեք չպետք է մոռանալ, որ Եկեղեցին ոչ թե հալածում է մեղավորին, այլ ունի ապաշխարության խորհուրդ և նախ կոչ է անում ապաշխարելու և մաքրագործվելու:

Այո՛, «Կանոնագիրք Հայոց»-ում, ի շարս այլ կանոնների, կան այնպիսիները, որոնք վերաբերում են կուսակրոնության ուխտի խախտմանը, և ուխտազանցը՝ լինի կրոնավոր թե միանձնուհի, սարկավագ թե եպիսկոպոս, պետք է ապաշխարի:

Օրինակ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ հայտնի կանոնախմբի 13-րդ կանոնը ուխտազանց կրոնավորների համար սահմանում է յոթ տարվա ապաշխարություն: Կապադովկյան հայրերից Գրիգոր Աստվածաբանի անվամբ հայտնի կանոնախմբի 19-րդ կանոնը սահմանում է, որ ուխտազանցը պետք է ապաշխարի՝ վեց տարի եկեղեցու դռնից դուրս լինելով, ապա՝ ևս երկու տարի, երբ կարող է եկեղեցի մտնել՝ առանց հաղորդությանը մոտենալու:

Կուսության ուխտը խախտողների նկատմամբ խիստ է Հայքում 444 թ. գումարված Շահապիվանի ժողովը: Այս ժողովի առաջին կանոնն ասում է, որ եթե եպիսկոպոսը պղծություն է գործում, շնանում կամ մի ուրիշ վատթար արարք է կատարում, ապա պետք է կարգալույծ արվի: Այստեղ, սակայն, նշենք մի կարևոր հանգամանք, որ որևէ հոգևորականի դեպքում կարգալուծություն կարող է պահանջել Եկեղեցու Կարգապահական հանձնաժողովը կամ Եպիսկոպոսաց ժողովը:

Քրիստոնեությունը, առհասարակ, խիստ մոտեցում ունի անբարո վարքագծի հանդեպ (և՛ հոգևորականների, և՛ աշխարհականների, և՛ տղամարդկանց, և՛ կանանց դեպքում), և անընդունելի է ինչպես մարմնով, այնպես էլ մտքով մեղանչելը: Տերունական խոսքը գիտենք՝ «Ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. Ե 28): Ուստի, մարմնական մեղքից բացի, մարդուն կորստյան է տանում նաև մտքով մեղանչելը:

Աստծու Որդին մարդացավ՝ Իր աստվածային բնությանը միավորելով մարդկային մարմին, հոգի և միտք. «....որով վերցրեց մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ բնորոշ է մարդուն» (Նիկիական Հավատո հանգանակ), ուստի մարդն էլ պետք է կատարելանա մարմնով, հոգով և մտքով: Գուցե որևէ մեկի մարմնական մեղքը մեզ համար ակնհայտ է, և մենք նրան քննադատենք, իսկ մեկ ուրիշը մարմնապես չմեղանչի և մեզ անմեղ թվա, սակայն միտքը մաքուր չլինի... Միայն Աստված կարող է քննել մարդու սիրտն ու հոգին:

Եվ որ շատ կարևոր է՝ քրիստոնեությունը միմյանց սխալները հրապարակելու և միմյանց քարկոծելու կրոն չէ, այլ սիրո կրոն է, որում սերը սովորական ընկերասիրությունից հասնում է մինչև խաչելություն: Քրիստոս մեզ պատգամել է. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ 39), իսկ Հայ Եկեղեցու սուրբ վարդապետ Անանիա Նարեկացին ասում է. «Խոնարհություն է, երբ մարդը տեսնում է ընկերոջ սխալը և չի բամբասում, նրան չի դատում, այլ ասում է, թե՝ ես հանցավոր եմ և ուրիշին չեմ կարող դատել»: Եթե աշխարհիկ կառավարությունը տեսնում է խնդիրներ եկեղեցական կյանքում, ապա պետք է այդ մասին բարձրաձայնի՝ փակ ժողով հրավիրելով և բարեկամաբար խոսելով:

5. Վերջին օրերին որոշ անձինք վկայակոչում են Աշտիշատի ժողովը և Անկյուրիայի ժողովի 20-րդ կանոնը՝ ի հաստատումն այն փաստի, որ կաթողիկոսը պետք է լինի կուսակրոն և կուսակրոնության ուխտը խախտելու կամ զավակ ունենալու դեպքում պետք է կարգալույծ արվի:

Սկզբից ևեթ ասենք, որ վերոնշյալ երկու կանոնները որևէ կապ չունեն կաթողիկոսի կամ եպիսկոպոսների կուսակրոն լինելու հետ: Այսպես՝ Հայոց մեջ առաջին եկեղեցական ժողովը տեղի է ունեցել 354 թ. Աշտիշատում՝ Ներսես Մեծ կաթողիկոսի (353–373 թթ.) նախագահությամբ: Այս ժողովի կանոններն ընդգրկված չեն «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում և մեզ են հասել Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի պատմագրքերից՝ ընդհանուր նկարագրությամբ: ➥ էջ 5

Եկեղեցիների ոչնչացումը Երևանում խորհրդային բռնապետության օրոք

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան իշխանության կողմից սկսվեց հակաեկեղեցական, հակակրոնական քաղաքականություն: Եկեղեցին հռչակվեց հակախորհրդային, հակահեղափոխական կազմակերպություն, կրոնը՝ հակախորհրդային գաղափարախոսություն: Նոր իշխանությունները չմոռացան նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի աջակցությունը Հայաստանի առաջին հանրապետությանը և անմիջապես անցան հակաեկեղեցական արշավի իրագործմանը:

Հայ հոգևորականության դեմ ծայր առան բռնաճնշումներ, հալածանքներ, մեղադրանքներ, ձերբակալվեցին մի շարք հոգևորականներ, ինչպես՝ Վանի վերջին առաջնորդական փոխանորդ, Վանի ինքնապաշտպանական մարտերի և Սարդարապատի հերոսամարտի մասնակից եզնիկ վարդապետ Ներկարարյանը, Մայր Աթոռի միաբան Արսեն վարդապետ Ղլտճյանը, Մուղնու վանահայր Խորեն վարդապետ Լազարյանը և ուրիշներ:

Հայաստանում խորհրդային իշխանությունների հակազգային ճնշումներն ու բռնությունները գնալով ավելի էին ուժգնանում: 1921 թ. փետրվարին դաշնակցականներն ապստամբեցին բոլշևիկյան իշխանության դեմ և մտնելով Երևան՝ ազատեցին բանտարկյալներին, որոնց թվում էին նաև հայ հոգևորականներ: Բոլշևիկների և դաշնակցականների հակամարտության ընթացքում զոհվեցին նաև հայ հոգևորականներ: Սևանի մենաստանի միաբան և Նոր Բայազետի գործակալ եզնիկ վարդապետ Վարդանյանին բոլշևիկները խեղդամահ արեցին Սևանի լճի սառցահորում՝ համարելով նրան «հակահեղափոխական և դավաճան»:

1921 թ. ապրիլի 22-ից՝ դաշնակցականների ապստամբությունը ճնշելուց հետո, խորհրդային իշխանության հակաեկեղեցական գործունեությունը շարունակվեց ավելի ուժգին թափով և դաժան մեթոդներով:

Շուտով բոլշևիկները Մայր Աթոռից առգրավեցին էջմիածնապատկան այգիներ. 6-ը՝ Վաղարշապատում, 2-ը՝ Երևանում, 3-ը՝ Աշտարակում, 2-ը՝ Օշականում, 1-ը՝ Փարաքարում:

1930—1931 թթ. Հայաստանում ձերբակալվեցին 46 հոգևորականներ. հակահեղափոխական և հակախորհրդային գործունեության համար նրանցից երկուսը՝ Վայոց Ձորի Հորադիզ գյուղի ծխատեր Տեր Ստեփան քահանա Ավետիսյանը և Խաչիկ գյուղի ծխատեր Տեր Արիստակես քահանա Խաչատրյանը, գնդակահարվեցին:

Հայ հոգևորականների դեմ բռնությունների գագաթնակետը 1936—1938 թվականներն են: Բռնությունների զոհ դարձան 134 հոգևորականներ, որոնցից 82-ը գնդակահարվեցին: Գնդակահարվածների թվում էին Մայր Աթոռի միաբաններ Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյանը, Թադևոս եպիսկոպոս Հարությունյանը և Շիրակի թեմի առաջնորդ Արտակ եպիսկոպոս Սմբատյանցը:

1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Վեհարանի իր ննջասենյակում խեղդամահ արվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը: Խորհրդային Հայաստանի պետքաղվարչության աշխատակիցների կողմից առգրավվեցին և պետականացվեցին Մայր Աթոռի գանձարանում պահվող երկուսուկես կիլոգրամ ոսկին, 16 փութ արծաթեղենը և մեծ քանակությամբ թանկարժեք քարեր:

Մարդկային զոհերից բացի՝ Հայ Եկեղեցին կրեց նյութական, բարոյական, պատմամշակութային վնասներ: Դեռևս 1924 թ. հուլիսին Երևանի փոխթեմակալ և Ամենայն Հայոց կաթողիկոսական տեղապահ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը հայտնում էր, որ Երևանում՝ Սադովայա (ներկայումս՝ Հին Երևանցի) փողոցում գտնվող Գեթսեմանի ուխտատեղի-եկեղեցին փակվել է: Շուտով այդ եկեղեցին քանդվեց, և տեղը կառուցվեց Երևանի օպերայի ակադեմիական թատրոնը:

Հայաստանում նոր թափով սկսեցին ավերել վանքերն ու եկեղեցիները: Նորքի Սիմեոն Ծերունի եկեղեցին պայթեցվեց 1930 թ.: Երևանում սկսեցին խոսել Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու նախապատրաստվող քանդման մասին: Այդ ընթացքում Հնությունների պահպանության կոմիտեն կատարում էր այդ եկեղեցու վերակառուցման աշխատանքները: Տեղեկանալով, որ եկեղեցուն վտանգ է սպառնում, մտահոգ ելույթներ ունեցան Հուշարձանների պաշտպանության կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանը և գիտական քարտուղար Աշխարհբեկ Քալանթարը: Նրանք 1930 թ. փետրվարի 6-ին և մարտի 2-ին նամակով դիմեցին Հայաստանի լուսժողկոմ Ա. Եղիազարյանին՝ հայտնելով իրենց մտահոգությունը. «Կոմիտեն տեղեկացել է, որ Երևանի քաղխորհուրդը որոշել է քանդել Աբովյան փողոցում գտնվող Պողոս-Պետրոս եկեղեցին: Կոմիտեն իր պարտքն է համարում հայտնել ձեզ, որ վերոհիշյալ եկեղեցին կառուցված է 1679 թ. մեծ երկրաշարժից անմիջապես հետո: Դա Երևանի ամենահին շենքերից մեկն է, որովհետև երկրաշարժը հիմնովին ոչնչացրել էր քաղաքի բոլոր կառույցները: Բացի դրանից, այն ունի իր վրա բազմաթիվ արձանագրություններ, քանդակներ, պատմական դուռը (Հին Բայազետից բերված) և իր ամբողջությամբ ներկայացնում է 17-րդ դարի հայ ճարտարապետական պատկերը: Նրա կործանումը մի զգալի բաց պիտի առաջացնի Երևան քաղաքի շինարարության պատմության համար: Ուստի և կոմիտեն խնդրում է ձեզ միջնորդել Ժողկոմխորհի առաջ թույլ չտալ այդ հուշարձանի քանդումը, մանավանդ որ նրա կանգուն մնալը չի խանգարում նրա շուրջը քաղաքացիական շենքեր կառուցելու Աբովյան փողոցի և հրապարակի կողմից»:

Նույն թվականի փետրվարի 21-ին Ա. Թամանյանին և Ա. Քալանթարին պատասխանեց Երքաղխորհրդի նախագահ Գ. Հանեսօղլյանը. «Հայտնում ենք, որ Պողոս-Պետրոս եկեղեցու մասին կան բազմաթիվ բանվորական կազմակերպությունների որոշումներ, որոնք հավանություն են ստացել քաղխորհրդի նախագահության կողմից: Հիշյալ եկեղեցին, ճիշտ է, չի ընկնում քաղաքի հատակագծման տակ, սակայն այդ դեռ չի նշանակում, որ քաղխորհուրդը կարող է հանդուրժել, որ այդ եկեղեցին կանգուն թողնվի իր շրջակայքի կառուցվելիք նոր տների մեջ....»:

Ս. Պողոս-Պետրոսի որմնանկարները գնահատելու համար Մոսկվայից Երևան հրավիրվեց գեղանկարիչ-վերականգնող Գրիգորի Չիրիկովը, որը որմնանկարներին ծանոթանալուց հետո Հայաստանի լուսժողկոմին տեղեկացրեց. «Իմ կարճատև այցելության ընթացքում հայտնաբերվեցին նյութեր և գրականության մեջ հիշատակություններ, որ գեղանկարչության յուղաներկ կերպը այստեղ հանդիպում է արդեն 10-րդ դարի սկզբին: Հավանաբար Արևելքի և մասնավորապես Հայաստանի ձեռագրերի ու գեղանկարչության նյութի խոր ուսումնասիրությունը կհարկադրի փոխել եվրոպական գիտական աշխարհում գոյություն ունեցող կարծիքը յուղաներկ կերպի առաջացման ժամանակաշրջանի մասին և կարևոր ճշտում կմտցնի գեղարվեստական գեղանկարչության մշակույթի ուսումնասիրության մեջ:

....Վերջում ուզում եմ կանգ առնել հենց իր շենքի քանդման, հետևաբար՝ գոյություն ունեցող որմնանկարների փոխադրման հարցի վրա: Ես գտնում եմ, որ դա պահելու պայմանների ցանկացած փոխառության դեպքում կկորսվեն ինչպես ամբողջ գիտական հավաստիությունը, այնպես էլ արժեքավոր տվյալները, որոնցից՝ իբրև գիտական բազայից, աշխարհի գիտնականներն ուսումնասիրության համար նյութ են քաղում:

Պահպանված գեղանկարչությունը վաղնջական ժամանակաշրջանի, դարերի ընթացքում գոյություն ունեցող եղանակների ուսումնասիրության ուղիների փարոս է, ուստի գտնում եմ, որ շինությունը քանդելու մտքից պետք է մեկընդմիշտ հրաժարվել»:

Բոլշևիկները ոչ մի գնով չէին հրաժարվում եկեղեցին քանդելու իրենց մտադրությունից և սոսկ դրա ժամկետը երկարացրին, որպեսզի հանդարտվեն եկեղեցու շուրջը ծագած կրքերը: Իսկ այդ ընթացքում Հուշարձանների պահպանության կոմիտեի մասնագետները շարունակում էին Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում կատարել վերականգնողական աշխատանքներ: Սակայն արդեն 1930 թ. հոկտեմբերին Երքաղգործկոմի կոմունալ տնտեսության բաժնի վարիչ Մարտիրոսյանը Հուշարձանների պահպանության կոմիտեին պահանջագիր ուղարկեց. «Նկատի ունենալով, որ գալիք շինսեզոնը սկսվելուն պես քանդվում է քաղաքի նախկին Պողոս-Պետրոս եկեղեցին, ուստի խնդրվում է դադարեցնել ձեր կողմից այդ շենքում տարվելիք վերակառուցման աշխատանքները և առանձնացնել ու փոխադրել կառուցվածքներից այն մասերը, որոնք՝ որպես հնություն, որոշ արժեք ունեն ու անհրաժեշտություն են ներկայացնում կոմիտեիդ համար: Ժամկետ՝ 20-ը նոյեմբերի»:

1930 թ. նոյեմբերի 6-ին Երևանի քաղաքային խորհրդի նախագահության նիստում լսվեց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քանդման հարցը: Երքաղխորհրդի նախագահությունը որոշեց. «Նկատի ունենալով, որ այդ եկեղեցու շենքը չունի ոչ մի ճարտարապետական արժեք, գտնել անհրաժեշտ նրա քանդման աշխատանքները ավարտել»:

1931 թ. Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարները խնամքով, շերտ առ շերտ տեղից հանվեցին լավագույն մասնագետների ձեռքով, ու եկեղեցին քանդվեց:

Մինչ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու ավերումը մասնագետները կարծում էին, որ այն կառուցվել է 17-րդ դարում՝ հայտնի երկրաշարժից հետո: Սակայն քանդելուց հետո պարզվեց, որ եկեղեցին «իր ներքին մասում դեռևս հարազատորեն պահել է 5-րդ դարի բազիլիկայի առանձնահատկությունները»: Կործանվեց հնագույն ժամանակներից մեզ հասած և մշակութային-ճարտարապետական ու պատմական կարևորագույն նշանակություն ունեցող մի կառույց:

1937—1938 թթ. Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների հաջորդ հարվածն ուղղված էր Երևանի Կաթողիկե եկեղեցուն, որը գտնվում էր Երևանի կենտրոնում: Ինչպես գրել է պատմաբան Կ. Դաֆթարյանը, «1936 թ. վերջերին Կաթողիկե եկեղեցին ընկնում էր կառուցվելիք շենքերի տեղում: Այդ պատճառով հարց ծագեց նրա քանդման մասին: Սակայն, որպեսզի քանդման ընթացքում որևէ կարևոր բան չփչանա, Երևանի քաղաքային խորհուրդը ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտին դիմեց թույլտվություն ստանալու համար: Ինստիտուտը քանդումները չարգելեց, թույլ տվեց, բայց պայման դրեց, որ քանդումները կատարվեն հնագետի ամենօրյա հսկողության ներքո, որպեսզի որևէ կարևոր բեկոր չկորչի և չփչանա: Այն ժամանակ վերոհիշյալ կազմի մեջ էր գտնվում նաև Պատմական հուշարձանների պետական մարմինը, որը և տողերիս հեղինակին նշանակեց այդ քանդումների հսկիչ-լիազոր: Մեր պարտականությունն էր օրվա բոլոր ժամերին հետևել քանդումներին, և եթե ի հայտ գային արժեք ներկայացնող բեկորներ կամ շենքի մասեր, ապահովել դրանց պահպանությունը:

Քանդումներն սկսվեցին դեկտեմբերին և տևեցին մինչև հաջորդ տարվա մարտ ամիսը: Այդ քանդումները թեև կրկնակի երկար տևեցին մեր՝ հաճախակի դրած արգելքների պատճառով, բայց Երևան քաղաքին պարգևեցին միջնադարյան մի հուշարձան՝ 13-րդ դարի երկրորդ կեսին պատկանող: Պետք է նշեմ, որ իսկական հայրենասերները, չվախենալով սարսափելի ժամանակներից, դիմադրեցին եկեղեցիները քանդող բարբարոսներին: Եզակի նվիրյալներից էր 20-ական թվականների բռնություններից հրաշքով փրկված Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, հնագետ-պատմաբան Աշխարհբեկ Քալանթարը՝ Արդվի գյուղի Լորիս-Մելիք-Քալանթարների ազնվական տոհմից սերված: ➥ էջ 8

Եկեղեցու անկախությունը պետական իշխանության հակազդեցության պայմաններում

➥ էջ 4

Աշտիշատի ժողովն անդրադարձել է ոչ թե հոգևորականների կուսակրոնության պահպանմանը կամ խախտմանը, այլ Հայաստանում վանական կյանքի կարգավորմանը, ինչը վերաբերում է միանձանց և միանձնուհիներին: Ժողովը սահմանել է վանականների և անապատականների համար կառուցել երեք տեսակի բնակատեղի՝ վանքեր, մենաստաններ և ճգնավորների խցեր:

Անկյուրիայի ժողովը, ինչպես հայտնի է, ունի համաքրիստոնեական նշանակություն: Այն հրավիրվել է 314 թ. Անկյուրիա քաղաքում (Փոքր Ասիա)՝ փաստորեն նախորդելով Նիկիայի՝ 325 թ. առաջին տիեզերաժողովին: 20-րդ կանոնը սահմանում է, որ ովքեր չափահաս են և կուսակրոնության խոստում են տվել, բայց դրժել են և մեղքի մեջ ընկել, պետք է ապաշխարեն երեք տարի՝ երկու տարի Սուրբ Պատարագի ժամանակ եկեղեցու դռան առջև պիտի լինեն՝ հսկողության ներքո, ևս մեկ տարի էլ ապաշխարողների հետ պետք է դուրս գան բուն Պատարագից առաջ:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ որևէ կուսակրոն հոգևորական կարող է զավակ ունենալ, ապա նշենք, որ ցանկացած երեխայի ծնունդ Աստծու արարչագործության շարունակությունն է, ամեն մի երեխա, երբ լույս աշխարհ է գալիս, Աստված նրան շնորհներ է պարգևում: Ուստի որևէ մեկն իրավունք չունի մեկ ուրիշի կյանքը համարելու սխալ:

Եզրահանգում

Ընդհանրական եկեղեցին՝ այդ թվում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, պատկանում է Հիսուս Քրիստոսին. Քրիստոս է Եկեղեցու գլուխը, և եկեղեցական բոլոր ծեսերը կատարվում են Սուրբ Հոգու շնորհներով: Եթե ներեկեղեցական կյանքում կան թերություններ, անշուշտ, հավատացյալ ժողովուրդն իրավունք ունի բարձրաձայնելու և պ՚ետք է բարձրաձայնի այդ խնդիրների մասին, սակայն լուծումը պետք է թողնել Աստծուն: Քրիստոս է ճշմարտությունը, ճանապարհը և կյանքը (Հովհ. ԺԴ 6), և ցանկացած խնդիր լուծվում է միայն Նրա կամքով: Սուրբ Հոգին է բնակվում Եկեղեցում, քանզի Քրիստոս ասաց. «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի եւ ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 26): Ուստի՝ Սուրբ Հոգին է մաքրագործողը և սրբացնողը, Նրա բաշխած շնորհներով է ամենայն ինչ լուսավոր և բարի դառնում: Եկեղեցու հետ հարաբերություններում պետք է զգոն և ողջախոհ լինենք, որ հանկարծ անզգուշաբար չվիրավորենք Սուրբ Հոգուն. «Ամեն մեղք եւ հայհոյանք կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյանքը չպիտի ներվի» (Մատթ. ԺԲ 31):

Գևորգ սրկ. ՂՈՒՇՉՅԱՆ, պ. գ. թ.
Լուսինե ԹՈՒՄԱՆՅԱՆ, պ. գ. թ.

Անգետ Թագավորը

Երբևէ լսե՞լ եք անգետ թագավորի, Անգետների թագավորության մասին: Ժամանակին դա մի ոտնաչափ պետություն էր՝ օվկիանոսից այն կողմ, որտեղ ո՛չ գիրք էին կարդում, ո՛չ հարց էին տալիս, ո՛չ էլ մտածում: Այստեղ բոլորը մի հին նշանաբան ունեին. «Ով շատ է մտածում, խելքահան է լինում»:

Թագավորության ղեկավարն էր Անպատասխանը: Նա գահին էր բազմել, քանի որ կարողացել էր ամեն հարցի պատասխան տալ՝ առանց մի բան իմանալու: Երբ նրան հարցնում էին՝ ի՞նչ եղանակ է վաղը լինելու, պատասխանում է.

— Արև կլինի, եթե, իհարկե, անձրև չգա:

Իսկ ներկաները զարմանքով ու բավականությամբ գլուխները տարուբերում էին:

Երբ հարցնում էին՝ ե՞րբ կլինի արևի խավարում, ասում է.

— Առաջիկա հարյուր տարվա ընթացքում, թեև շատերն այն չեն տեսնի: Բայց իմացած եղեք, որ արևը միշտ էլ արևելքից է դուրս գալու և քուն է մտնելու արևմուտքում:

— Մեր թագավորն իմաստուն է,— բացականչում էր ժողովուրդը:

Մի օր մի ուրիշ թագավորությունից՝ Գիտության երկրից, նրանց առաջարկեցին համագործակցել՝ գրքեր ուղարկել, դպրոցներ հիմնել, որպեսզի վերջիններս էլ ըմբոշխնեն գիտության քաղցրությունն ու առավելությունները: Բայց Անպատասխանի պալատում խորհուրդ գումարեցին, և որոշվեց.

— Գիտելիքը վտանգավոր է: Այն հարցեր է առաջացնում, իսկ մենք բոլոր հարցերի պատասխաններն արդեն ունենք:

Թագավորությունում հայտնված գրքերն այրվում և անհիծյալ էին հռչակվում: Բայց բոլոր նրանք, ովքեր գաղտնի պահեցին իրենց հասած գրքերն ու կարողացան կարդալ, ժամանակ անց մեկնեցին Գիտության երկիր՝ դառնալով հայտնի մարդիկ ու նշանավոր գիտնականներ: Իսկ Անգետների թագավորությունում ժամանակը կարծես կանգ էր առել:

Անպատասխանը շարունակում էր գահին նստած կառավարել ու ասել.

— Ով շատ մտածի, խելքահան կլինի, ով շատ կարդա, կխելագարվի:

Եվ ժողովուրդը դարձյալ բավականացած գլուխը շարժում էր.

— Ահա՛ իմաստուն մի թագավոր...

Փայտի կտորը

Աշնան հով էր փչում սարերից: Բոխու մթին անտառները ծփում էին, տերևները՝ հանգչում թավշե խաշամի մեջ: Գյուղի եզերքում, ուր դաշտը լեռանն էր հենվում, ապրում էր այգեգործ Սանասարը: Նրա ծառերի մեղմանուշ բույրը հասնում էր մինչև հարևան Բաղդասարի բակը:

Մի օր, երբ Սանասարն իր այգին մտավ, տեսավ, որ խնձորները հողին են, դեղձենին՝ վնասված, հողը՝ տրորված ու ոտնահարված: Ինչպես մեղավորը խոստովանությունից առաջ, նա կանգնեց երկար, աչքերի մեջ՝ մութ: Ո՛չ լաց եղավ, ո՛չ աղաղակեց: Միայն վերցրեց փայտի հաստ կտորը մացառների տակից ու քայլեց դեպի Բաղդասարի տուն:

Գյուղի շները լուռ էին: Միայն քամին էր, որ շարունակում էր այս ու այն կողմ տանել նրանց վաղեմի հաչը:

Բաղդասարը բացեց տան դուռն ու... չհասցրեց հասկանալ, թե ինչպես վայր ընկավ: Հետո ցավից պարզ դարձավ, որ ճակատին հարված է եղել:

Հետայնու գյուղը երկատվեց. լռությունը զենք դարձավ: Մեկի տունն այրեցին, մեկի այգին ապականեցին, մեկի ջրաղացը խորտակեցին...

Միայն Գագիկ պապն էր, որ այս ամենին չէր խառնվում՝ հին թթենու տակ նստած, իր ամենօրյա հացը բաժանելով շան հետ:

Վերջապես մի օր, կանչելով երկուսին էլ, ասաց.

— Ախպե՛ր,— դու քո ձեռքով այգի ես տնկել, նա իր ձեռքով պատ է դրել: Բայց այգին ո՞վ է քանդել, գիտե՞ք...

Լռեցին: Պապը լուռ նայեց սարերին:

— Խոզ էր մտել, քաղցած, վայրի խոզ: Գիշերվա կեսին, սարից իջած: Ես տեսա՝ ոնց փորփրեց: Բայց չէի հասցնի ասել ու հետո էլ չհասցրի...

Արևը մայր էր մտնում: Սրաթև թխկիի տերևները դանդաղ թափվում էին: Ոչ մեկը չէր խոսում: Բաղդասարն աչքերը հառել էր հողին, իսկ Սանասարը փայտի կտորը մի կողմ էր գցել:

Գյուղի շները լուռ էին: Միայն քամին էր անցնում հին թթենու միջով ու կարծես ինչ որ բան էր շշնջում...

Արծիվն ու թութակը

Մի թագավոր շատերի պես ցանկացավ պալատում թռչուն ունենալ: Բերել տվեց գեղագեղ տեսքով, հզոր թևերով, վիթխարի մի արծիվ և ամենուր նրան իր հետ էր վերցնում: Մի անգամ նա արծվին հրամայեց.

— Ասա՝ ո՞վ է իմ երկրում ամենախելացին:

Արծիվը պատասխանեց.

— Նա, ով կարողանում է տեսնել իր սխալը:

— Ո՞վ,— չլսելու տալով՝ կրկին դարձավ թագավորը:

— Նա, որ անմիջապես անդրադառնում է իր սխալին և դաս է քաղում:

Թագավորը թեև ժպտաց, բայց այնքան էլ գոհ չմնաց պատասխանից:

— Սխալ պատասխան ես տալիս,— որոշ դադարից հետո անդրադարձավ նա,— ասա՝ ո՞ր թագավորն է ամենախելացին:

Արծիվը լուռ էր:

— Այդ դեպքում,— դարձյալ վրա բերեց թագավորը,— կարո՞ղ ես ասել՝ ո՞վ է ամենագեղեցիկը:

— Ով ներդաշնակության և ճշմարտության մեջ է ապրում,— կրկին խրոխտ պատասխանեց արծիվը:

— Ամենաազա՞ն...

— Ով իշխում է իր ցանկություններին, գիտակցում է իր ընտրությունն ու չի խուսափում պարտականությունից:

Դրանից հետո թագավորը լռեց՝ ընկղմելով մտասևեռումների մեջ, ու տևական ժամանակ այլևս արծվի հետ չէր զրուցում:

Ժամանակ անց պալատ բերեցին մի թութակ: Թագավորը նրանից էլ հետաքրքրվեց.

— Ո՞վ է ամենախելացին:

Թութակն անմիջապես արձագանքեց.

— Թագավո՛րն է, թագավո՛րը:

— Իսկ ամենագեղեցի՞կը:

— Թագավո՛րն է, թագավո՛րը,— հետևեց նույն պատասխանը:

Թագավորն ուրախացավ ու ծափահարեց:

Հաջորդ օրը՝ լուսաբացին, արծիվը բացեց իր հուժկու թևերը, սավառնեց երկինք ու այլևս չերևաց հորիզոնում, իսկ թութակն ինքնակամ գնաց և մտավ նրա վանդակը:

Հետագիծ

Ժամանակին Հայոց աշխարհի գեղադիր լեռնալանջերից մեկում մի չքնաղ մենաստան կար՝ աղոթասեր վանականներով ու գիտուն գրիչներով, որոնք օրն ի բուն աղոթում, աշխատում ու պահպանում էին մարդկության ու ժամանակի հարգանքը վաստակած լիառատ սրբությունները:

Մենաստանում մի ծեր վարդապետ կար՝ Անանիա անունով, որին բոլոր եղբայրներն անխտիր հարգում էին իմաստուն ու խոնարհ հոգու համար:

Մի օր մենաստանի դուռը բախեց մի ճամփորդ՝ մաշված հանդերձներով, հոգնաբեկ, աչքերում՝ ցավ ու անհուսություն:

Անանիան մոտենալով՝ հարցրեց.

— Որտեղի՞ց ես գալիս, որդյակ:

— Ես շատ ճանապարհներով եմ անցել,— պատասխանեց անծանոթը,— բայց ոչ մի տեղ խաղաղություն չեմ գտել:

— Իսկական խաղաղությունը ներսից է գալիս, երբ մարդը գործում է ողջամտորեն՝ փորձելով ճանաչել իրեն ու շրջապատող աշխարհը: Բայց դրա մասին ավելի մանրամասն հետո կզրուցենք: Հիմա ներս անցիր...

Վանականները ճամփորդին ընդունեցին հարազատորեն՝ տալով կերակուր, ըմպելիք ու մի փոքրիկ կացարան: Բայց ամեն գիշեր, երբ նա քայլում էր մենաստանի բակում, Անանիան նրա քայլերի մեջ ինչ-որ անօրինակ ծանրություն էր զգում:

Մի օր, երբ ճամփորդը նստած էր այգում, Անանիան մոտեցավ ու ասաց.

— Քո ոտքերն այնքան ծանր են, որ հողն է անգամ ցնցվում: Ի՞նչ բեռ ես կրում քեզ վրա:

Ճամփորդը գերադասեց լռել, բայց քիչ հետո ասաց.

— Մի ժամանակ մեծ մարդ էի՝ մեծավորների հետ ու նրանց կողքին: Բայց հարստությունից ու հպարտությունից կուրացա... և արդարի վնասեցի... Հետո հեռավոր լեռները եկա՝ մտածելով, թե այստեղ խաղաղություն կգտնեմ: Բայց իմ թողած հետագիծը գիշերվա հողմի պես հետապնդում է ինձ:

Անանիան մի պահ լուռ փակեց աչքերը, ապա ասաց.

— Ոմանց համար խաղաղությունը ուժի և զորության կիրառումն է, ոմանց համար՝ հոգևոր վերելքը, կամ՝ հաշտությունը, կամ՝ լուսավորությունը: Իսկական խաղաղությունն այլ կերպ չի լինում, եթե ոչ՝ խոնարհությամբ, մարդասիրությամբ և աստվածասիրությամբ, իրավունքի և արդարության պահպանումով: Քեզ թվում է, թե մարդուս թողած հետքը հողի, այնինչ՝ հենց ի՛ր մեջ է:

Ճամփորդը լուռ էր: Հետո ակամայից ծնկները ծալվեցին...

— Հիմա ինչպե՞ս պիտի վարվեմ, վարդապետ:

Վարդապետը ժպտաց.

— Քո հետագիծը հիմա շիտակ չէ, բայց եթե փորձես դարձյալ քայլել այնտեղից, որտեղից որ խաղաղությունդ ընդհատվել է, մարդկանց և Աստծու հետ ապրես ճշմարտությամբ ու հաշտությամբ, հետագիծդ, որ հիմա բեռ է դարձել, կամուրջ կդառնա...

Իսահակ վարդապետ ՊՈՂՈՍՅԱՆ

Երաժշտության զարգացումը սուրբգրային ժամանակաշրջանում

Աստվածաշնչյան ժամանակաշրջանի մասին մեր գիտելիքները հիմնականում հիմնված են Աստվածաշնչի գրական հղումների և հետաստվածաշնչյան աղբյուրների վրա: Կրոնի և երաժշտության պատմաբան Հերբերտ Լոքյերը գրում է, որ երաժշտությունը (թե՛ վոկալ, թե՛ գործիքային) դարերի ընթացքում լավ զարգացած է եղել եբրայեցիների, Նոր Կտակարանի ժամանակաշրջանի քրիստոնյաների և քրիստոնեական Եկեղեցու շրջանում: Հին Կտակարանին անդրադարձը բացահայտում է, թե ինչպես է Աստծո ժողովուրդը նվիրված եղել երաժշտության ուսումնասիրությանը և կիրառմանը, որը յուրահատուկ տեղ է զբաղեցնում պատմական և մարգարեական գրքերում, ինչպես նաև Սաղմոսարանում:

Դավիթ թագավոր-սաղմոսերգու, Երուսաղեմ, ձեռ. 1925: Աստվածաշունչ, 1269 թ., Երզնկա

Կրոնական ծիսակատարության երաժշտությունն առաջին անգամ օգտագործել է Դավիթ թագավորը. նրան է վերագրվում Ղևիի ցեղի տղամարդկանց՝ Աստծուն երաժշտությամբ ծառայելու պահապաններ համարելը: Պատմաբան Իրեն Հեսկը նշում է, որ Հին Կտակարանի երեսունհինը գրքերից Սաղմոսաց գրքի 150 սաղմոսները, որոնցից շատերը վերագրվում են Դավիթ թագավորին, ծառայել են որպես հրեա-քրիստոնեական հիմնագիտության հիմք՝ եզրակացնելով, որ արևմտյան քաղաքակրթության մեջ ոչ մի այլ պոետիկ ստեղծագործություն այդքան հաճախ երաժշտության համար չի գրվել:

Հնագիտական և գրավոր տվյալները հստակ ցույց են տալիս, որ երաժշտությունը Հին Իսրայելում առօրյա կյանքի անբաժանելի մասն էր: Արձանիկներն ու պատկերագրական ժառանգությունը վկայում են, որ մարդիկ նվագում էին թմբուկներ, և որ մարդկային ձայնը ևս կարևոր էր, երբ կանայք և տղամարդիկ երգում էին սիրային երգեր, մահացածների համար՝ ողբեր: Առկա տվյալները նաև ներկայացնում են երաժշտության և պարի բացօթյա տեսարաններ՝ երբեմն մարգարեական խելահեղություններով, հաճախ նվագախմբով և խորեոգրաֆ երաժիշտներով ու երգիչներով:

Հին երաժշտության պատմաբան Թեոդոր Բուրգի խոսքով՝ «եթե մենք կարողանայինք մտնել.... աստվածաշնչյան ժամանակաշրջան, մենք կգտնեինք երաժշտությամբ լի մշակույթ.... որտեղ մարդիկ օգտագործում էին երաժշտություն իրենց առօրյա կյանքում»: Նման երաժշտությունը կարող էր արտահայտել տրամադրությունների և զգացմունքների մեծ բազմազանություն, ուրախության և տխրության, հույսի և վախի, հավատքի և կասկածի ընդգրկուն հակադրություններ: Իրականում զգացմունքների յուրաքանչյուր երանգ ու որակ կարելի է գտնել երգերի և սաղմոսների հարստության և ժողովրդի բազմազան մեղեդիների մեջ:

Հին հրեաների ամենակարևոր երաժշտական ներդրումը հավանաբար ծիսական երաժշտության կարգավիճակի բարձրացումն էր՝ զուգորդված ծիսական արարողությունների հետ: Երաժշտա-ծիսական կազմակերպվածության վկայությունն են Սողոմոն թագավորի տաճարի նկարագրական պատմությունները, որոնց համաձայն՝ Տաճարում առկա էր 288 երաժիշտներից բաղկացած 24 երգչախումբ:

Չնայած հրեաների կողմից կիրառվող գործիքներն օգտագործվում էին նաև հարևան մշակույթներում, այդ թվում՝ Փյունիկիայում, Եգիպտոսում, Ասորեստանում և Հունաստանում, ճշգրիտ կլինի ասել, որ երաժշտության հատուկ՝ սրբազան և աշխարհիկ, բարոյական ու գեղագիտական կիրառություններում հին հրեական երաժշտությունն է յուրահատուկ ներդրում ունեցել:

Երաժշտության պատմաբան Ջոն Սթեյները նշում է, որ Աբրահամի և քանանացիների միջև ավելի վաղ հարաբերություններն ամենայն հավանականությամբ ազդել են հրեական երաժշտության զարգացման վրա, որը հավանաբար ստիպել է Աբրահամի սերունդներին որոշակի քանակությամբ երաժշտական գործիքներ տեղափոխել Եգիպտոս: Նա ավելացնում է, որ չորս դար մնալը «այնպիսի քաղաքակիրթ մշակույթում, ինչպիսին Եգիպտոսն է, մեծապես նպաստել է նրանց՝ արվեստի վերաբերյալ գիտելիքների զարգացմանը»:

Ա Մնացորդաց 25:1—31-ում թվարկված և ներկայացված են այն հմուտ երաժիշտները, որոնք պետք է կատարեին կամ «մարգարեանային» ծնծղաներով, տավիղներով, քնարներով Տաճարի ծառայության մեջ:

Չնայած Սաղմոսների և Աստվածաշնչի մյուս գրքերի հին երաժշտությունը (դրանք բոլորը երգվում էին) հաճախ համարվում է կորած, եբրայերեն Աստվածաշնչի մասորեթական բնագիրը պարունակում է երգեցողության նշաններ, որոնք ցույց են տալիս բառերի մեղեդային գիծը: Հետևելով ֆրանսիացի հնագետ Սյուզան Վանտուրային՝ որոշ մասնագետներ այժմ պնդում են, որ այս երգեցողության նշանները թվագրվում են Առաջին տաճարի ժամանակներին և արձանագրում տաճարում երգվող երաժշտությունը: ➥ էջ 7

Երաժշտության զարգացումը սուրբգրային ժամանակաշրջանում

↩ էջ 6

Փորձեր են արվել դրանք վերծանել ժամանակակից երաժշտական նոտագրությամբ:

Տաճարի երաժշտական ավանդույթները խզվեցին Առաջին տաճարի ոչնչացման և հրեաների՝ դեպի Բաբելոն աքսորի պատճառով Ք. ա. 6-րդ դարում: Սաղմոսների մեծ մասը գրվել է հրեաների՝ Երուսաղեմ վերադառնալուց հետո: Այդ ժամանակ նույնպես, ըստ երևույթին, տարածում է գտել երգչի և ժողովրդի միջև անտիֆոնային երգեցողության փորձառությունը:

Հին Իսրայելի երաժշտությունը ներկայացնում է գրեթե տասնչորս դարերի փոփոխություն՝ մոտավորապես Ք. ա. 1300 թվականից մինչև Ք. հ. 70 թվականը, երբ տեղի ունեցավ Տիտոսի կողմից Երուսաղեմի պաշարումը: Սթեյները նշում է այս ժամանակահատվածում բազմաթիվ արտեֆակտների բացակայությունը: Նա եզրակացնում է, որ «հրեաներին վերաբերող ազգային հուշարձանների տխուր բացակայությունը զարմանալի չէ, երբ հիշում ենք, որ Երուսաղեմը մոտ տասնյոթ պաշարման է ենթարկվել, որոնցից յուրաքանչյուրն ուղեկցվել է ավելի կամ պակաս ավերածություններով, և դա նույնպես հաղթողների ձեռքով, որոնք կարծես չարամիտ հաճույք էին ստանում նվաճված ազգային առանձնահատկությունները ջնջելուց»:

Սակայն Առաջին տաճարի անկումից հետո, ինչպես նշում է Վերները, հրեական նախաաքսորական երաժշտությանը վերադառնալու հրեաների երաժշտական փորձերը ներառում էին հիշողություններ, տեսիլքներ և ֆանտազիաներ, մանավանդ որ ռաբբիները ջանք էին գործադրում վերացնելու թե՛ երգչախմբային, թե՛ գործիքային ավանդույթները. «Նրանց ժամանակը հասել էր, և նրանց պատկերացումները ծեսի և երաժշտության վերաբերյալ արմատապես տարբերվում էին տաճարի քահանաների պատկերացումներից»: Վերները պարադոքսալ է համարում, որ ժամանակակից ռաբբիները շարունակում են գովաբանել տաճարի գործիքային երաժշտությունը, բայց այսօր արգելում են ցանկացած գործիքային երաժշտություն իրենց սինագոգներում:

70 թվականին Երկրորդ տաճարի ավերումը հանգեցրեց հրեական ազգի փլուզմանը և հրեական սփյուռքի (ցրման կամ աքսորի) սկզբին դեպի այլ երկրներ, ինչպիսիք են Իսպանիան, Իտալիան և Հռենոսի ափերը: Այս վայրերում սինագոգը փոխարինում է ավերված տաճարին՝ ծիսական նոր արարողություններով, աղոթքներով և ռաբբիական գրություններով, որոնք ուղղված են ինչպես տաճարի, այնպես էլ անձնական ազատության կորուստը սգալուն:

Հին Իսրայելի երաժշտական ավանդույթը շաղկապվում էր միջագետքյան այլ երկների մշակույթներին, ինչպես՝ եգիպտականին և շումերականին: Եգիպտականը Մերձավոր Արևելքի ամենահին մշակույթներից էր և ուներ զարգացած բարձր երաժշտական արվեստ, որը թվագրվում է Ք. ա. մոտ 3000 թ.: Սակայն եգիպտական աղբյուրները ներառում են միայն պատկերազարդ մասունքներ, որոշ գործիքներ և մի քանի գրական գրառումներ, որոնք վերաբերում են կատարողական փորձին: Պահպանվել են կրոնական արարողություններին և հասարակական զվարճանքներին մասնակցող քնարահարների և ֆլեյտահարների բարձրաքանդակներ:

Եգիպտոսում օգտագործվել են մի շարք գործիքներ, այդ թվում՝ քնարը (տավիղի տեսակ), ասիական տարբեր թմբուկներ, սիստրումը: Հայտնաբերվել են նաև որմնանկարներ, որոնք պատկերում են երգիչների և գործիքավորողների ելույթներ: Երաժշտության պատմաբան Հոմեր Ուլրիխի կարծիքով՝ հավանական է, որ Եգիպտոսն ազդել է հունական երաժշտության կրթական և բարոյական կողմերի վրա: Սթիվեն Բատուկը նկատել է, որ երաժշտությունը պատմական կապ ունի արարչագործության շաբաթվա հետ, երբ օդում թռչունները ձայներ էին արձակում, որոնք կարելի է համարել երաժշտություն:

Չնայած գրառումները քիչ են, հայտնի է, որ Ք. ա. 3000-ից 2300 թթ. Շումերում և Բաբելոնում, որոնք Միջագետքի ամենահին մշակութային վայրերն էին, գոյություն է ունեցել կազմակերպված տաճարային երաժշտություն՝ երգիչներով: Պեղումները բացահայտել են մի քանի երաժշտական գործիքներ, այդ թվում՝ տավիղներ, քնարներ, կրկնակի հոբոյներ և այլ գործիքներ: Եբրայեցիների և բաբելացիների, ասորեստանցիների և խեթական կայսրության սեմական մյուս ազգերի միջև քաղաքական փոխհարաբերությունների բերումով նրանց ազգային երաժշտական ժառանգության մեջ կային նմանություններ:

Շատ քիչ բան է հայտնի նաև վաղքրիստոնեական երաժշտության մասին, քանի որ ինչպես հին երաժշտության մեծ մասը, այնպես էլ այդ շրջանի երաժշտությունը հնչյունագրված չէին և սերնդեսերունդ փոխանցվելուն զուգընթաց դրանք շատ տարբերվեցին բնօրինակից: Այնուամենայնիվ, այս վաղ երաժշտության մեծ մասն իր գեղեցկությունն ստացել է հունականից, իսկ սրբությունը՝ եբրայականից: Եբրայական երաժշտությունն ուղղակի և անմիջական ազդեցություն է ունեցել վաղքրիստոնեական եկեղեցու երաժշտության վրա: Եբրայական և քրիստոնեական երգեցողության միջև կապերը գիտականորեն ուսումնասիրվել և ապացուցվել են:

Ղևտացիների՝ տաճարի երաժիշտների երաժշտական արվեստը կորել է 1-ին դարի վերջին: 70 թ. Տիտոս կայսեր զորքերն ավերեցին Երկրորդ տաճարը, իսկ հաջորդ տարիներին ղևտացիները հրեաների մեծամասնության հետ միասին փախան Հրեաստանից: Ի վերջո ցրված սինագոգի երաժշտությունը կորցրեց տաճարի ուրախ բնույթը, և գործիքային մեծ ուժերը վերացան:

Ըստ Հովսեփոս Փլավիոսի՝ Առաջին տաճարի բոլոր մանրամասները՝ ներառյալ նրա երաժշտական գործիքները, պատրաստվել և դիտվել են որպես տիեզերքի խորհրդանիշեր, հատկապես այնպիսի գործիքներ, ինչպիսիք են տավիղն ու քնարը:

Նոր Կտակարանը գրվել է այն ժամանակ, երբ երաժշտությունը շատ ավելի բարձր զարգացման էր հասել: Այնուամենայնիվ, երեք Ավետարաններում դրան քիչ հղումներ կան. Ղուկասի Ավետարանում՝ «Հրեշտակների երգը», Մարիամի «Մեծացուսցեն» և Զաքարիայի օրհներգությունը: «Գործք առաքելոց»-ում Պողոսն ու Շիղան երգում են բանտի ճաղերի հետևում. բանտը ցնցվում է, դռները բացվում են, և նրանք ազատ են: Նամակներում երաժշտությանը քիչ են հղումներ արվում, բայց եփեսացիներին ուղղված նամակում Պողոսը հորդորում է եկեղեցիներին՝ երգել սաղմոսներ և հոգևոր երգեր:

Շարունակելի

ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Եսայի՝ Հին Կտակարանի ավետարանիչը և խղճի կենդանի ձայնը

Մարդկության պատմության մեջ կան անուններ, որոնք դարձել են խղճի ձայներ՝ չանթեղվելով դարերի խորքում: Եսայի մարգարեն այդ կենդանի ձայներից մեկն է: Նա ապրել է գրեթե երեք հազար տարի առաջ՝ պատերազմների, ճգնաժամի, դաժան բարքերի և կռապաշտության դարաշրջանում: Եսային պարզապես հոգևոր առաջնորդ չէր. իր ժողովրդի արդար խղճի ձայնն էր: Նա ճշմարտությունն էր ասում թագավորներին՝ նրանց աչքերին ուղիղ նայելով, կանխատեսում էր աղետներ, կոչում ապաշխարության և ամենակարևորը՝ աշխարհին հույս ավետում, հույս՝ Մեսիայի, նորոգված մարդկության և արդարության թագավորության:

Ո՞վ էր այս մարգարեն, որին անվանում են Հին Կտակարանի ավետարանիչ, և որի խոսքերը մեջբերում է Ինքը՝ Հիսուս Քրիստոս: Ինչո՞վ են նրա խոսքերն արդիական 21-րդ դարում: Ինչո՞ւ արժե ունկնդրել Եսայու ձայնը՝ ոչ թե սնահավատության վախից ելնելով, այլ ճշմարտության ծարավից:

Եսայի մարգարեն ծնվել է Ք. ա. 770 թ. կամ ըստ այլ տեսակետների՝ Ք. ա. 765 և 760 թթ. միջև: Սերում էր Հուդայի ցեղից և բնակվում Երուսաղեմում: Իր իսկ հիշատակմամբ՝ ոմն մարգարեուհու հետ ամուսնությունից ունենում է երկու երեխա (Ես. Ը 3): Վստահաբար պատկանում էր իր ժամանակաշրջանի կրթված մարդկանց դասին, ինչը երևում է նրա խոր աստվածաբանական գաղափարներից, վարդապետական մտքի ընդարձակությունից և խոսքի հմուտ կիրառությունից:

Եսային մարգարեական պաշտոնին կանչվում է մի ցնցող տեսիլքից հետո (Ես. Զ 1), որը նրան հաղորդ է դարձնում Աստծու փառքին ու սրբությանը և վճռորոշ դառնում նրա հետագա հոգևոր կյանքի համար:

Եսայու գրքի թեման վերաբերում է ճշմարտության վարդապետությանը, համաձայն որի՝ փրկությունն Աստծու շնորհն է, այլ ոչ մարդկային ձեռքբերում: Մարգարեն դա պատվիրում է իր գրքի առաջին մասում՝ քարոզելով, որ հուդայական ազգը մաքրագործվելուց հետո կփրկվի Աստծու գթասրտության շնորհիվ, և զարգացնում է այդ միտքը գրքի երկրորդ մասում՝ հիշատակելով Մեսիայի անձը՝ որպես այդ փրկության օժանդակողի:

Եսայու գիրքը բաղկացած է 66 գլխից և իր ծավալով Հին Կտակարանի, ինչպես նաև ողջ Սուրբ Գրքի ամենամեծ գիրքն է: Եսայու գիրքը Հին և Նոր Կտակարանները կապող օղակ է: Նրանում առկա մարգարեությունները հեշտությամբ կարելի է բաժանել երկու հիմնական մասի: Առաջինը վերաբերում է հուդայական պետության մոտալուտ կործանմանը և ժողովրդի գերությանը դեպի Բաբելոն, իսկ երկրորդը՝ բաբելոնյան գերությունից վերադարձին և Երուսաղեմի գալիք փառքին:

Նոր Կտակարանը Եսայու գրքից ավելի շատ է մեջբերումներ անում, քան Հին Կտակարանի ցանկացած այլ գրքից: Հիշատակվում է մոտ հարյուր հատված. կեսը ներկայացվում է բառացի: Անշուշտ, սրանցից շատերը վերաբերում են Եսայի մարգարեին: Նրան հիշատակելու այս հաճախականությունը բացատրվում է այն հանգամանքով, որ Հիսուսն անձամբ կարդում է նրա գիրքը և դրանից հատվածներ օգտագործում հրեաների հետ զրուցելիս. «Նրան տվին Եսայի մարգարեի գիրքը.... Գիրքը բացեց, գտավ այն տեղը, ուր գրված էր. «Տիրոջ Հոգին Ինձ վրա է, դրա համար իսկ օծեց Ինձ»» (Ղուկ. Դ 18): Բացատրվում է նաև նրանով, որ Նոր Կտակարանը Եսայու մարգարեությունների վրա է հիմնում իր գլխավոր վարդապետությունը, որ վերաբերում է Հիսուս Քրիստոսի՝ մարդկության Փրկչի գալստյանը և Նրա քավչական զոհաբերությանը:

Եսայի մարգարե, Երուսաղեմ, ձեռ. 2563, Կեռան թագուհու Ավետարան, 1272 թ.

Եսային է այն մարգարեն, որ ամենից շատ է մարգարեացել, կանխատեսել Քրիստոսի մասին, այն աստիճան, որ կոչվել է նախաավետարանիչ կամ ավետարանիչ մարգարե: Դիցուք՝ նա է ասողը. «Ահա կույսը կհղիանա և մի Որդի կծնի, և Նրա անունը Էմմանուել կլինի» (Ես. Է 14): Եսայի մարգարեի գիրքն անվանում են Հինգերորդ Ավետարան:

Մարգարեի գրությունները բավական հետաքրքիր նյութ են ուսումնասիրության համար, որոնց դիպուկ բնութագրություն է տվել Ալեքսանդր Մենը՝ նշելով, որ դրանք առանձնանում են բարձր գրական արժեքներով, ժանրերի բազմազանությամբ և պատումի լեզվի հարստությամբ:

Եսայու գիրքը պատգամների օվկիանոս է Աստծու, արդարության, մեղքի, կրոնի և ընկերային շատ ուրիշ հարցերի մասին: Իր մարգարեական ծառայության տարիների ընթացքում Եսային շարունակ ենթարկվում էր հալածանքների, և միայն բարեպաշտ Եզեկիա թագավորի օրոք էր, որ նա պատիվ էր վայելում և նույնիսկ արքայի մերձավոր խորհրդականն էր:

Սուրբ Եսայի մարգարեի կյանքն ավարտվում է նահատակությամբ: Ըստ եկեղեցական հնագույն ավանդության՝ նահատակվել է Մանասե ամբարիշտ թագավորի հրամանով՝ սղոցվելով:

Ժամանակակից աշխարհի աղմուկի, անհանգստությունների, պատերազմների, սոցիալական ցնցումների և հոգևոր ճգնաժամի պայմաններում մենք հաճախ որոնում ենք մի խոսք, որն ավելի ուժեղ կլինի, քան ժամանակը, մի խոսք, որը ոչ միայն կոգեշնչի, այլև ճանապարհ ցույց կտա: Եվ այդպիսի խոսք գտնում ենք Եսայու մարգարեության գրքում. հնագույն բնագիր, որ լցված է մարգարեական զարմանալի ուժով և հոգևոր խոր իմաստությամբ:

Եսայու ձայնը որոտի նման էր. մերկացնում էր սուտը, կոչ էր անում ապաշխարության և միաժամանակ հիշեցնում՝ Աստված չի լքում Իր ժողովրդին նույնիսկ ամենախավար օրերին: Մի՞թե սա արձագանք չի գտնում մեր իրականության մեջ:

Այսօր, երբ բախվում ենք չարի նոր դրսևորումների՝ պատերազմներ, աղքատություն, հոգևոր անտարբերություն, ընտանեկան արժեքների քայքայում և այլն, Եսայի մարգարեի ձայնը հնչում է այնպես, կարծես նա խոսում է մեզ հետ ուղղակի, դեմ հանդիման:

«Վա՛յ նրանց, որոնք չարին ասում են բարի և բարուն՝ չար, որոնք խավարը լույսի տեղ են դնում և լույսը՝ խավարի, որոնք դառը դնում են քաղցրի տեղ և քաղցրը՝ դառի» (Ես. Ե 20): Այս խոսքերը կարծես հենց մեր ժամանակների համար գրված լինեն, երբ բարոյական չափանիշները հաճախ մոռացության են մատնվում կամ խեղաթյուրվում:

Եսայի մարգարեի գիրքը միայն ազգերի ու ճակատագրերի մասին չէ: Այն ուղղված է յուրաքանչյուր մարդու, յուրաքանչյուրիս կոչ է անում խորհել և ինքնաքննել՝ իսկ ինչ կա իմ մեջ, պատրա՞ստ եմ դառնալ ուրիշների համար լույս, ապրո՞ւմ եմ հավատքով, հույսով և սիրով:

Եսայի մարգարեի գիրքը պարզապես Սուրբ Գրքի մի հատված չէ: Դա կենդանի ձայն է, որը խոսում է այսօր մեզ հետ: Նրա տողերում կան և՛ Աստծու արդարությունը, և՛ չարիքի հանդիմանումը, և՛ մարդու հանդեպ խոր կարեկցանք ու հույս: Սա այն գիրքն է, որ արժե կրկին ու կրկին ընթերցել այս անհանգիստ օրերին՝ ճշմարտության և լույսի ճանապարհի որոնումներում:

Թող Եսայու խոսքերը չմնան միայն հնագույն գրքի էջերում, այլ կենդանանան մեր գործերում, մեր հավատքով և սիրով:

Եսայի մարգարեին Հայ Եկեղեցին հիշատակում է Վարդավառի տոնին հաջորդող հինգշաբթի օրը:

Դավիթ սրկ. ՍԵՐԳԵՅԵՆԿՈ
Հայկ Ծատուրյան

«Այծերն ու գայլերը» առակի պատմական հեռքերով

«Հավաքվեցին այծերը միասին և պատգամ ուղարկեցին գայլերի ազգին և ասացին, թե ինչու մեր մեջ լինի անհաշտ խռովություն, այլ ոչ թե խաղաղություն: Եվ հավաքվեցին գայլերը և ուրախացան մեծ ուրախությամբ և նամակով պատգամ ուղարկեցին այծերի ազգին, նաև անթիվ ընծաներ: Եվ գրեցին այծերին.

«Լսեցինք ձեր բարի խորհուրդը և գոհանում ենք Աստծուց, որովհետև մեզ համար մեծ խնդություն է և խաղաղություն. նաև իմացնում ենք ձերդ իմաստության, որ հովիվն ու շներն են պատճառ և սկիզբ մեր խռովության և կռվի. և եթե նրանց վերացնենք մեջտեղից, շուտով խաղաղություն կլինի»:

Լսեցին այծերը, հաստատեցին և ասացին.

— Իրավացի են գայլերը, որ մեզ սպանում են, որովհետև շները և հովիվը նրանց հալածում են մեզնից:

Եվ այծերը վտարեցին շներին և հովվին և երդվեցին, որ հարյուր տարի մնան անխախտելի սիրով: Եվ այծերը ցրվեցին լեռները և դաշտերը և սկսեցին ուրախ լինել և ցնծալ և խաղալ, որովհետև արածում էին լավ արոտներում, ուտում էին համեղ խոտեր, խմում էին պաղ ջրեր և խնդում էին և վազվզում էին՝ փառք տալով, որ հասան բարի ժամանակի:

Եվ գայլերը համբերեցին հարյուր օր, ապա հավաքվեցին դասդաս, ընկան այծերի վրա և կերան» (փոխադրությունը գրաբարից՝ Ակսել Բակունցի):

Հայոց մեծանուն վարդապետ, աստվածաբան, քարոզիչ և առակագիր Վարդան Այգեկցու (12—13-րդ դդ.) ստեղծագործություններն իրենց իմաստությամբ և ուսանելիությամբ միջնադարից ցայսօր հայ ժողովրդին հոգևոր սնունդ են ջամբում: Եվ հատկապես իրենց մատչելիությամբ ու խորիմաստությամբ սիրելի են ու հանապազ ընթերցելու հանձնարարելի նրա բարոյախրատական առակները, որոնց մեջ ի մասնավորի հույժ ուսանելի է «Այծերն ու գայլերը» վերտառությամբ առակը: Հեղինակը կարճամփոփ, բայց շատ բովանդակալից սույն առակում բացահայտում է այծերի կարճամտությունը՝ իրենց ոխերիմ թշնամիների հետ հավիտենական խաղաղություն հաստատելու առնչությամբ, ինչն այնքան արդիական է մեր օրերում, որ առաջին հայացքից կարող է թվալ մինչև իսկ մարգարեական: Այս առակը հոգևոր չափման մեջ ազգային մտայնության ու հոգեբանության որոշակի առանձնահատկության՝ որպես անվերջանալի դժբախտություններ ի և չարիքների պատճառներից մեկի ի հայտ բերման և զգուշացման խորհուրդն ունի՝ առ հայոց բոլոր սերունդները դարեդար:

Պատմությունն ու գրականությունը մասնավորապես այս մասին մեզ քիչ նյութեր ու փաստեր չեն տրամադրում՝ խորհելու, վերարժևորելու և եզրակացություններ անելու:

Այսպես՝ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը գրում է. «Նորաստեղծ հայկական պետությունը, չունենալով դիվանագիտական փորձ և համապատասխան կադրեր, չկարողացավ ճկուն լինել միջազգային բարդ իրադրության պայմաններում: Մինչև վերջին պահը (պարտությունը թուրք-հայկական պատերազմում) կառավարությունը հետևում էր արևմտյան կողմնորոշմանը, շարունակում էր սպասել «լիակատար հիասթափությանը» (Ալ. Խատիսյանի արտահայտությունը) եվրոպական դաշնակից տերություններից և ԱՄՆ-ից, չնայած ակնհայտ էր, որ նրանք ցանկություն չունեին օգնության գալու Հայաստանին, իրականացնելու Սևրի պայմանագրով նախատեսված որոշումները» («Հայոց պատմություն», 1996, էջ 275):

Հայ պատմիչ Առաքել Դավրիժեցին, իր «Պատմություն» մեծարժեք աշխատությունում անդրադառնալով Կաթողիկե Եկեղեցու՝ Հայաստանում և հայկական գաղթօջախներում ծավալած ունիթորական շարժման երկրորդ շրջանին՝ ծայր առած 16-րդ դարի վերջերից, գրում է, որ ֆռանկ հայրերը (իմա՝ կաթոլիկ միաբանները) վխտում էին ամենուր՝ ոմանց կաշառելով, իսկ մյուս բոլորին էլ նենգաբար հավատակից եղբայրներ ներկայանալով, այնինչ «պարզամիտ հայերը չգիտեին, թե նրանք ինչ նպատակով էին շրջում.... Իրենց հետ քարտեզաման մի գիրք ունեին իրենց լեզվով ու տառերով, որ ճշտորեն ու անսխալ ցույց էր տալիս, թե որտեղ են սրբերի գերեզմաններն ու դամբարանները...., և շրջելով վանքերում՝ նրանք այն գրքով գտնում էին սրբերի նշխարները, վանքերի բնակիչներին բան էին տալիս և նշխարները առնում էին»: Այս ամոթալի գործունեությունը, բարեբախտաբար, դադարեց այն բանից հետո, երբ երկու հայ եպիսկոպոսներ, մտնելով Ս. Հռիփսիմե եկեղեցի, տեսան՝ ինչպես են երեք կաթոլիկ միաբաններ քանդած գերեզմանից մեր մեծ սրբուհու նշխարները գողանում. ծեծկռտուքի են բռնվում, մինչև որ գործը բարձրագույն ատյաններին է հասնում, և այդպես հրաշքով սրբությունները փրկվում են:

Հայոց բառարաններում «միամիտ» բառը բացատրվում է հետևյալ կերպ՝ պարզամիտ, հետին միտք չունեցող, կարճամիտ, անհեռատես, անփորձ, որ գործի միայն մի կողմն է տեսնում: Այնինչ հոգեբանական բառարաններում կարդում ենք. «Հոգեբանական վիճակ, որ մարդկանց մեջ միայն բարությունն ու անկեղծությունն է տեսնում՝ իսպառ անտեսելով հնարավոր ծածուկ նենգ ծրագրերն ու սպառնալիքները»:

Ռ. Անգալադյանն այս չափազանց զգայուն խնդրի մասին «Հայերն ու հրեաները (էթնիկ-պետական զուգահեռներ)» հոդվածում գրում է. «Հայտնի է, որ հայերի ազգային խառնվածքում զգացմունքային-ռոմանտիկ սկիզբը համադրվում է ծայրահեղ ռացիոնալիզմի հետ: Միջակացվածունիվերսալները (ըստ հեղինակի՝ հույսն իրենց վրա դնողները) կառուցում են իրենց անհիրականալի դղյակներն ու հեքիաթներ հյուսում պետական հարցերի շուրջ, իսկ կենցաղային, առօրյա կյանքում ծայրահեղ հաշվենկատ են... Հենց այդ միջակությունն է, որ կործանել է հայոց պետականությունը վաղ միջնադարում և այսօր էլ շարունակում է ղեկավարել հասարակությանը» («Գարուն», 2001, թիվ 2):

Այնպես որ զգացմունքային-ռոմանտիկ բնույթը՝ իր խիստ ազգային առանձնահատկությամբ, լիովին կարող է իր մշտական տեղը գտնել «միամիտ» բառի երկարուձիգ նշանակությունների ցանկում:

Գրեթե նույն միտքը, բայց փոքրինչ այլ կերպ արտահայտում է նաև Դերենիկ Դեմիրճյանն իր՝ թերևս հայի հոգեբանական բնութագիրներից լավագույնի մեջ՝ «Հայը» հոդվածում. «Դիպլոմատիայի մեջ հայը մի բանումն է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքան անկեղծ է և միամիտ, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է անում: Մինչդեռ իր հարևանները՝ այս աշխարհի բեմի վրա դեր կատարելով միայն, ցույց են տալիս, թե կացնով հարվածում են դիմացինին, հայը իսկապես կացինը իջեցնում է գլխին: «Ապա ճշմարտությունը»,— մտահոգվում է նա.... Անկարգ է և անիշխանական թե հասարակության, թե պետության և թե գաղափարների մեջ: Իբրև ժողովրդական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար....

Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ, և ինքն էր, որ չխրատվեց: Իր օրիենտացիան բացակայի օրիենտացիան է: Թաթմրն է մոտը, սպասեց ռուսին. ռուսը եկավ, աչքը եվրոպացուն էր. եկավ անգլիացին, դարձյալ ռուսին էր սպասում: Ռուսն է գալիս, չի ընդունում... Ուրեմն իր պետությունն է ուզում ստեղծել, ինչ իմանաս... Մի ձեռը ճանկռոտելով հիմնում է այդ պետությունը, մյուս ձեռքը ճիգ է անում հիմքից քանդելու»:

Հովհաննես Թումանյանը՝ ամենայն հայոց բանաստեղծը, ասես մեր իսկ օրերի համար գրած լինի. «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է: Հալածանքների ու գաղթականությունների հարց է: Նա գերազանցապես ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ: Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել Հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու Հայկական սարսափներին: Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ: Եվ տեղ չկա խուսափելու» (Երկերի լիակատար ժողովածու, հտ. 7, Երևան, 1995, էջ 15—16):

Այգեկցու սույն առակը սուրբգրային խորհուրդ ունի նաև, այն է՝ ճանաչել աշխարհն այնպիսին, ինչպիսին որ է՝ իր չարիքով ու բարիքով հանդերձ, հաղթահարելով դյուրահավատությունը՝ երբեք և ոչ մի պարագայում չվստահել, չհավատալ թշնամուն, ինչպես այդ մասին ուսուցանում են Հին Կտակարանի իմաստության գրքերը. «Եթե քո թշնամին քեզ աղաչի և բարձր ձայնով աղերսի, մի՛ հավատա նրան, քանզի յոթը չարիք կա նրա սրտում: Ով թաքցնում է ատելությունը, նա հայտնի է դարձնում նենգությունը» (Առակ. 26.25—26): Կամ՝ «Հավիտյան մի՛ հավատա քո թշնամուն, քանզի ինչպես պղինձն է ժանգոտում, այնպես էլ նրա չարությունը: Թշնամին քաղցր է իր շրթունքներով, բայց իր սրտում խորհում է խորխորատի մեջ քեզ կործանելու մասին: Թշնամին իր աչքերով է արտասվում, բայց եթե հարմար պահ գտնի, արյունից չի հագենա» (Սիրաք 12. 10, 15, 17):

Հարկ է նաև միշտ հիշել մեկ այլ սուրբգրային խորհուրդ՝ նախորդից ոչ պակաս կարևոր, այն է՝ խրատվել չկամեցողները՝ պատվիրաններն անտեսողները, ըստ 59-րդ սաղմոսի՝ «հիմարության գինի» կխմեն, այսինքն՝ կպատժվեն, այնինչ խրատ լսող բարեպաշտներն ու հնազանդները կվայելեն Աստծո բարիքները:

Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ

Եկեղեցիների ոչնչացումը Երևանում խորհրդային բռնապետության օրոք

↩ էջ 5

Նա՝ մեծ գիտնականն ու հնագետը, չէր կարող անտարբեր մնալ Հայաստանի պատմական արժեքների ճակատագրի հանդեպ և համառ պայքար էր մղում եկեղեցիները քանդելու դեմ: 1937 թ. հունվարի 19-ին Ա. Քալանթարն ընդարձակ նամակով դիմեց հայ բոլշևիկների ղեկավար Ամատունուն. «Ձեր ուշադրությունն եմ հրավիրում Կաթողիկեի՝ իբր կարևոր պատմական հուշարձանի քանդումի վրա, որ ներկայումս կատարվում է Երևանում, քաղխորհրդի կողմից: Երևանը հարուստ չէ պատմական հուշարձաններով, հազիվ երկուերեք հատ, այն էլ վերջին դարերի անճաշակ նորոգումներով արտաքուստ այլանդակված դրությամբ, որով, սակայն, նրանք կորցնում են իրենց գիտական արժեքը:

Կաթողիկեն պատկանում է խոր հնության: Ներկայիս շենքը իր պլանով 7-րդ դարի է, սակայն բազմիցս նորոգված, և կաթողիկե (այս կոչումը ճարտարապետական տիպը որոշող տերմին է) վերջին մասը բոլորովին փոխված է: Շենքի արևմտյան մասը, որի մշակումը կատարված է 10—11-րդ դարերում, զարմանալիորեն մինչև այժմ մնացել է նույնությամբ, անավարտ, առանց ռեստավրացիաների մինչև վերին մասը՝ դիմանալով անգամ Երևանի մեծ երկրաշարժին 17-րդ դարում (1679 թ.), այդ երևում է նաև նրանից, որ գմբեթի հենց տակը գտնվում է 13-րդ դարի սկզբի մի կարևոր ընդարձակ արձանագրություն (հակառակի պես հենց այս մասում է այս րոպեիս կենտրոնացված քանդումը):

Կաթողիկեն բոլորովին ուսումնասիրված չէ, և քանդումից առաջ էլ ոչ մի, թեկուզ նախնական հետազոտություն կատարված չէ: Այն հապճեպությամբ, որ կատարվում է այս քանդումը, հնարավոր չէ նայել անգամ, ուր մնաց ֆիկցիայի ենթարկել, ազատել կամ ուսումնասիրել բացվող արժեքները: Բայց նրանք կան....

Սրանք Երևանի հնագույն պատմության միակ փաստաթղթերն են, հայ արվեստի կոթողները, ուստի և անթույլատրելի է նրանց ոչնչացումն այն ձևով, ինչպես այդ կատարվում է ներկայումս քաղխորհրդի կողմից:

Ելնելով վերոհիշյալից՝ խնդրում եմ կարգադրել կանգնեցնել քանդումը և հանձնարարել հատուկ մասնագիտական ժողովին՝ կատարելու շտապ հետազոտություն և նրա արդյունքն այդ հուշարձանի գիտական արժեքի մասին ձեզ ներկայացնելու զեկուցագրով»:

Ամատունին այս նամակը մակագրեց Հանեսօղլյանին. «Խնդրում եմ հաստատել այս հարցը և մտցնել բյուրո», այն նույն Հանեսօղլյանին, որը ժամանակին Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քանդման հեղինակներից էր, իսկ այժմ պետք է ավերեր մեկ այլ պատմական կոթող: Պրոֆեսոր Ա. Քալանթարին շուտով մոռացան, իսկ նրա առաջ քաշած հարցն այդպես էլ չքննարկեցին Կենտկոմի բյուրոյում, ու նամակն անհետացավ արխիվներում: 1938 թ. որպես ժողովրդի թշնամի՝ ձերբակալվեց նաև Աշխարհբեկ Քալանթարը և մի քանի տարի հետո՝ հավանաբար 1942-ին, մահացավ աքսորավայրում:

1940-ական թթ. երկրորդ կեսին քանդվեցին Երևանի Ս. Աստվածածին և Ս. Լուսավորիչ եկեղեցիները: Նորքի Ս. Աստվածածին եկեղեցին քանդվեց 1947 թ., իսկ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ 1949 թ.:

Ս. Լուսավորիչ եկեղեցին գործել է 1900—1926 թթ.: 1920-ական թթ. այն վերածվեց «Անաստված» կինո և տիկնիկային թատրոնների: 1947 թ. մայիսի 14-ին ջրհեղեղի պատճառով այդտեղ բնակություն էին հաստատել տուժածները: Եկեղեցին սկսեցին քանդել 1949-ի ամռանը: Իշխանություններն ստիպեցին, որ եկեղեցին քանդեն գերմանացի ռազմագերիները, սակայն վերջիններս հրաժարվեցին: Իշխանությունների հրահանգով Ամիրյան փողոցը փակեցին 10—15 բեռնատար մեքենայով, ապա եկեղեցու գմբեթի խաչը ճոպանով կապելով բեռնատարին՝ քաշեցին և խաչը տապալեցին: Երկու ամիս անընդհատ քանդում էին եկեղեցին, բայց չէին կարողանում ավերել. չափից ավելի ամուր էր մինչխորհրդային կառույցը: Հետո եկեղեցու մի մասը քանդեցին՝ պատի մեջ տեղադրելով պայթուցիկ նյութ և պայթեցնելով այն: Հետագայում փլուզված քարերի մի մասն օգտագործվեց դպրոցի շինարարության համար:

Ինչպես արդարացի նկատել է Ա. Քալանթարը, Երևանը հարուստ չէր պատմական հուշարձաններով, և եղածը պետք էր զգուշությամբ և ապահով պահպանել գալիք սերունդների համար, ոչ թե բարբարոսաբար նրան զրկել իր հոգևոր ժառանգությունից ու հարստությունից:

Ստեփան ՍՏԵՓԱՆՅԱՆՑ, պ. գ. դ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.08.2025 թ.
Տպաքանակը՝ 1265